16 ՅՈՒՆԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 110(4729)

Azg ԱԶԳ

ISSN: 1829-1651

ԱՄՆ-ը՝ արդարության ու Թուրքիայում «փոթորիկ առաջացնելու» արանքում

Կոնգրեսում երկու բանաձեւ է ներկայացվել՝ Ցեղասպանության ճանաչման ու քրիստոնյաներին եկեղեցական գույքի վերադարձման մասին

ԱՂԱՎՆԻ ՏԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Միացյալ Նահանգները պարտավոր է հիշել նրանց, ովքեր ձայն չունեն: 95 տարի առաջ մեկուկես միլիոն մարդ է սպանվել պարզապես նրա համար, որ եղել է հայ», հայտարարել է ԱՄՆ կոնգրեսական **Ռոբերտ Դոլդը** իր գործընկերներ Ադամ Շիֆի, Ֆրանկ Փալոնի եւ Էդ Ռոյսի հետ ԱՄՆ Կոնգրեսում ներկայացնելով Հայոց ցեղասպանության փաստը ճանաչող օրինագիծը հունիսի 14-ին:

Ըստ Ամերիկայի հայկական համագումարի հաղորդագրության, կոնգրեսական Դոլդն ընդգծել է, որ ինքն անձամբ է լսել իր ընտրատարածքի ամերիկահայերի՝ Հայոց ցեղասպանության ժամանակ կորցրած սիրելիների ու հարազատների մասին ծանր պատմությունները: Դոլդը շեշտել է Հայոց ցեղասպանության ճանաչման կարեւորությունը՝ որպես գալիք ցեղասպանությունների կանխարգելմանը նպաստող քայլ:

Ադամ Շիֆն ավելացրել է, որ պատմության փաստերը հստակ են, լավ փաստաթղթավորված, ու բանակցելի չեն. «...Մեկուկես միլիոն հայ դիտավորությամբ սպանվել է 20-րդ դարի առաջին ցեղասպանության ժամանակ»: «Եթե մենք պետք է կանխենք գալիք հրեավորությունները, մենք պետք է դատապարտենք ցեղասպանությունը՝ երբ ու որտեղ էլ այն տեղի ունեցած լինի: Ու բանի դեռ ապրում են ցեղասպանություն վերապրածներ, մենք հրաշաղ ու բարոյական պարտավորություն ունենք բացեիբաց խոսելու անցյալից», ասել է կոնգրեսական Շիֆը:

Ի լրումն համահեղինակ հանդես եկող 57 կոնգրեսականների այս նախագծին աջակցություն հայտնելու հանգամանքին՝ եւս մեկ օրինագիծ ամբողջացնում է նախաձեռնությունը: Մասնավորապես, նույն օրը Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ահաբեկչության ենթահանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսն ու նույն հանձնաժողովի անդամ Հովարդ Բերմանը ներկայացրել են «Կոչ Թուրքիային՝ պատշաճեցնելու իր քրիստոնեական ժառանգությունը եւ վերադարձնելու բռնագրավված եկեղեցական գույքը»:

Տես էջ 2

Հայոց կաթողիկոսը հանդիպել է Չախալյանի ծնողների հետ

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը Ջավախք իր հովվապետական այցի շրջանակներում՝ Ախալքալաք քաղաքում երեկ հանդիպել է ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի ծնողների հետ:

Ինչպես տեղեկացնում է «Երկիր» միությունը, Վեհափառը հայտնել է նրանց, որ տեղյակ է խնդրին եւ արդեն իսկ բարձրացրել է ջավախահայ գործչին ազատ արձակելու հարցը վրաց պատրիարք Իլյա Երկրորդի առջեւ:

«2011թ. հուլիսի 17-ին լրանում է Վահագն Չախալյանի բանտարկության երրորդ տարին: Ջավախահայ գործիչը, խայտառակ օրինախախտումներով ուղեկցվող դատավարությամբ, վրաց իշխանությունների կողմից դատապարտվել է 10 տարվա ազատազրկման մի շարք շինծու մեղադրանքների հիման վրա», նշված է միության հաղորդագրության մեջ, հավելելով, որ Ամենայն հայոց կաթողիկոսի այցի նախօրյակին 1200-ից ավել ջավախահայեր հանրագրի միջոցով դիմել էին Վեհափառին՝ Վահագն Չախալյանի խնդիրը վրաց հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների առջեւ բարձրացնելու խնդրանքով: Վերջինիս մասին տեղեկացրել էր նաեւ «**Ազգը**»:

Ա. Հ.

Աղարդյուն է անցնում ցեղասպանության օրինագիծը չեզոքացնելու ԱՄՆ-ի թուրքական համայնքի փորձը

Հունիսի 14-ին Ադամ Շիֆի գլխավորությամբ հայամետ չորս կոնգրեսականներ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ են ներկայացրել «Հայոց ցեղասպանության ճանաչման» օրինագիծը: «**Ազգն**» այդ մասին նախապես տեղեկացրել է:

Դրա նախօրյակին Նյու Յորքի Turkishny կայքէջն էլ տեղեկացնում էր ԱՄՆ-ի թուրքական համայնքի ներկայացուցիչներից Ալի Չինարի՝ այդ նախաձեռնությունը չեզոքացնելու ձեռնարկումների մասին: Ըստ կայքէջի, «տարիներ շարունակ ցեղասպանության հայկական մոդումների դեմ պայքարող Չինարը, դիմելով ԱՄՆ-ում բնակվող թուրքերին, հորդորել է կապ հաստատել իրենց նահանգի կոնգրեսականների հետ եւ պահանջել, որ վերջիններս չընդառաջեն Ներկայացուցիչների պալատ հայկական նոր օրինագիծ ներկայացնելու հնարավոր նախաձեռնությանը»:

Այնուհետեւ Չինարն ասել է. «Փոխանակ զարգացումներին վերջին պահին միջամտելու, պետք է ճնշում գործադրել, որ օրինագիծը դուրս մղվի օրակարգից: Մենք դա հնարավորությունն ունենք: ԱՄՆ-ում թուրքերի այս պայքարը անխափան շարունակվելու է, միայն թե թուրքական համայնքը գիտակցի իր պարտականությունը»:

Թուրքերը հավանաբար գիտակցում են, Չինարը՝ առավել եւս, բայց ճշմարտությունը, ինչպես երեւում է, վեր է թուրքերի ժխտողականությամբ պայմանավորված գիտակցությունից:

Հ. Ջ.

55-ամյա տղամարդը սեռական ոտնձգություն է թույլ տվել 4-ամյա երեխայի նկատմամբ

Օրերս Աշտարակում սահմռկեցուցիչ դեպք է տեղի ունեցել. 55 տարեկան տղամարդը սեռական ոտնձգություններ է թույլ տվել 4-ամյա երեխայի նկատմամբ: Ոստիկանության լրատվական ծառայությունից տեղեկացնում են, որ այդ մասին հաղորդում մայիսի 31-ին ոստիկանության Աշտարակի բաժանմունքում տվել է հենց երեխայի մայրը՝ 22-ամյա Լ. Հ.-ն:

Նա հայտնել է, որ մայիսի 27-ի երեկոյան Աշտարակ քաղաքի բնակիչ ոմն Ռուբո բռնի սեխուալ բնույթի գործողություններ է կատարել 4-ամյա դստեր նկատմամբ:

Իրավապահ մարմնի աշխատակիցների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Ռուբոն նույնինքն 1957 թ. ծնված Ռուբիկ Պ.-ն է, որը բերման է ենթարկվել բաժին:

Ոստիկանության հասարակայնության հետ կապերի բաժնից տեղեկացրեցին, որ կատարվածի առնչությամբ հարուցվել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 139 հոդվածի 3-րդ մասով՝ «սեխուալ բնույթի բռնի գործողությունները 14 տարին չլրացած անձի նկատմամբ»:

Նրա խոսքով, նշանակվել է կենսաբանական ու դատաբժշկական փորձաքննություն: Կատարվում է նախաքննություն:

ՀԱԿԻՐՔ

Աթենքում երեկ մեկօրյա գործադուլ էր, ոստիկանները արցունքաբեր գազ են կիրառել

Երեկ Հունաստանի մայրաքաղաք Աթենքում մեկօրյա գործադուլ էր հայտարարված՝ ընդդեմ կառավարության կոշտ տնտեսական քաղաքականության: Հազարավոր ցուցարարներ դուրս էին եկել փողոցներ, հատկապես Աթենքի կենտրոն՝ կառավարական հիմնարկների մոտ պիկետներ եւ բողոքի գործողություններ կազմակերպելով: Առանձնապես կիզակետ էր դարձել խորհրդարանը, որը երեկ 28 մլրդ եվրոյի բյուջետային խնայողության ծրագիր է հաստատել, որով բարձրացվում են հարկերը, նվազեցվում աշխատավարձերը: Կառավարությունը հույս ունի այդպես մեղմել ճգնաժամի հետեւանքները: Առավոտյան ցուցարարները շրջափակել էին կառավարության շենքը՝աշխատելով պատգամավորների մուտքն արգելել շենք: Անգամ ոստիկանության վրա քարեր եւ յոգուրտներ են նետվել: Ոստիկանությունն արցունքաբեր գազ եւ մահակներ է գործածել ցուցարարներին դրելիս:

Մ. Խ.

Չեխիան հրաժարվում է ամերիկյան հակահրթիռային համակարգից

Չեխիան հրաժարվել է մասնակցել հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգին, որ Վաշինգտոնը ցանկանում է տեղակայել Արեւելյան Եվրոպայի երկրներում: Այդ մասին, ինչպես հաղորդում է Associated Press-ը, հայտարարել է Չեխիայի պաշտպանության նախարար Ալեքսանդր Վոնդրան: Վոնդրան, որ հունիսի 15-ին բանակցություններ է վարել ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Ուիլյամ Լինների հետ, հայտնել է, թե Պրահային դուր չի գալիս այն դերը, որ հատկացրել են ամերիկացիները իրենց հակահրթիռային պաշտպանության համակարգում: Նա նշել է, որ Չեխիան պատրաստ է համագործակցել, բայց ոչ այն չափով, ինչ ուզում է Վաշինգտոնը: Առայժմ հայտնի չէ ամերիկացիների արձագանքը Վոնդրայի հայտարարությանը: ՀՀՊ-ի բանակցությունները սկսվել էին դեռ Ջորջ Բուշի օրոք: Ռուսաստանը մշտապես հանդես է եկել ամերիկյան այս նախաձեռնության դեմ:

Հ. Ա.

Ֆրանսիայի համագործակցության հարցերով նախարարը՝ Երեւանում

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մամուլի ծառայությունից տեղեկացնում են, որ հունիսի 16-ից 17-ը պաշտոնական այցով Հայաստան կժամանի Ֆրանսիայի համագործակցության հարցերով նախարար Անրի դը Ռենկուրը: Այցի ընթացքում ֆրանսիացի նախարարը կհանդիպի հանրապետության նախագահին եւ արտգործնախարարին, ծաղկեպսակ կդնի Ցեղասպանության զոհերի հուշարձանին, ինչպես նաեւ կայցելի Խոր Վիրապ եւ Մատենադարան:

Այսօրվանից ջերմաստիճանը կբարձրանա 5-6 աստիճանով

Կանխատեսվում է մեղմ ամառ

Հայթեսիհիդրոմետի օդերաշիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանը** լրագրողների խնդրանքով երեկ ներկայացրեց առաջիկա հինգ օրերի եւ ամառն ամիսներին կանխատեսվող եղանակի տվյալներ: Տկն Պետրոսյանը նախ անդրադարձավ վերջին շրջանում տեղացած անձրեւներին ու կարկուտներին եւ ասաց, որ դրանք նախորդ տարվա հետ համեմատ գերազանցել են տեղումների նորման՝ մինչեւ 250 տոկոսի չափով: «Հունիսի առաջին կեսն աչքի ընկավ հորդառատ տեղումներով, որոնք առանձին վայրերում ուղեկցվեցին կարկուտով՝ քամու ուժգնացմամբ: Տարվա այս ժամանակահատվածի համար այդ երեւույթը հատուկ է, հիմնականում Հայաստանում կարկուտներն ու հորդառատ անձրեւները դիտվում են մայիս-հունիս ամիսներին, սակայն այս տարի դրանց քանակը գերազանցել է, եւ մինչեւ հունիսի վերջը հյուսիսային շրջաններում կարկուտի վտանգը պահպանվում է»:

Առաջիկա հինգ օրերին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, օդի ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա 5-6 աստիճանով՝ հասնելով մինչեւ 30-32 աստիճանի, նվազագույնը հովային շրջաններում՝ 16-18: Հյուսիսային շրջաններում, հատկապես Լոռու եւ Տավուշի մարզերում երեկոյան ժամերին եւ գիշերը սպասվում են կարճաստեւ անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում հնարավոր են կարկուտ, քամու ուժգնացում:

Հուլիս եւ օգոստոս ամիսներին սպասվում է մեղմ եղանակ, առավելագույն ջերմաստիճանը կլինի 35-37 աստիճան: Հնարավոր է, որ մեկ-երկու օր մի փոքր բարձանա: Այդ ամիսներին անձրեւները զգալի պակասում են, երաշտի վտանգ չկա, քանի որ խոնավությունը բարձր է:

Հունիսի 16-20-ը հանրապետությունում երեկոյան ժամերին հնարավոր է ամպրոպ, տեղումների հավանականությունը Երեւանում փոքր է: Հունիսի 16-ին կլինի +28+30, 17-ին՝ +30+32, 18-20-ը՝ +31+33:

«**Ազգի**» հարցին պատասխանելով՝ տկն Պետրոսյանը նշեց, որ Սեւանա լճի ջրի բարձրությունն այս պահին կազմում է 1900 մետր 47 սմ, եւ այս տարի կբարձրանա 20-27 սմ-ով: Այսօր Սեւանա լճի ջրի ջերմաստիճանը 14 աստիճան է, իսկ նախորդ տարի նույն ժամանակաշրջանում եղել է 18 աստիճան: Ջերմաստիճանի բարձրացման հետ կբարձրանա նաեւ ջրի ջերմաստիճանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԶԳ

Ընթացիկ

Բենեդիկտովը հա՞յ է

Անցյալ ամիս Ռուսաստանում մեծ լսարան ունեցող «Էխո Մոսկվի» ռադիոկայանի գլխավոր խմբագրի տեղակալ Սերգեյ Բունտմանը այցելեց Ղարաբաղ, տեղում ծանոթացավ իրավիճակին, զրուցեց ԼՂՀ նախագահի, Ստեփանակերտի քաղաքապետի հետ, ծանոթացավ նաեւ Ստեփանակերտի օդանավակայանի կառուցման աշխատանքներին ու տեղեկացրեց ռադիոկայանի լսարանին: Սրանից հետո, ինչպես արդեն տեղեկացրել է «**Ազգը**», Բունտմանը Ադրբեջանում հայտարարվեց «անցանկալի անձ»՝ «առանց Բաքվին տեղյակ պահելու եւ նրա համաձայնության Լեռնային Ղարաբաղ մուտք գործելու համար», այս մասին հայտարարեց Ադրբեջանի ԱԳՆ ներկայացուցիչ Էլիան Փոլուխովը: Երբ դեռ Բունտմանը չէր եկել Ստեփանակերտ, ադրբեջանական լրատվամիջոցներից՝ կոնկրետ Vesti.az-ին արդեն հայտնի էր դարձել, որ «Էխո Մոսկվի»-ից «ոմն լրագրող Բունտման» պատրաստվում է այցելել Ղարաբաղ: Vesti.az-ի «հետաքննող լրագրողը» պարզել էր, որ Բունտմանը «կիսով չափ հայ է». «Ահա եւ պատասխանը, թե ինչու է հենց Բունտմանը գործողվում անջատողական Ղարաբաղ», եզրակացրել էր ադրբեջանական կայքը: Փաստորեն նույն տրամաբանությամբ, ասացվում է, որ բոլոր այն օտարերկրյա թղթակիցները, որոնք ինչ-ինչ առաքելությամբ կամ հետաքրքրությամբ գալիս են Ղարաբաղ, «կիսով չափ հայ են»: Ինչեւէ. Փոլուխովի վերոհիշյալ հայտարարությունից հետո ելույթ ունեցավ «Էխո Մոսկվի»-ի գլխավոր խմբագիր Ալեքսեյ Բենեդիկտովը: Սկզբում ընդամենը արտահայտեց իր զարմանքը՝ ասելով. «Իմ առաջին տեղակալ Սերգեյ Բունտմանի Ադրբեջան մուտք գործելու արգելքը չի առաջացնում որեւէ այլ բան, քան զարմանք»: Այնուհետեւ, երբ Բաքուն որոշեց անդայման հասնել «արդարության վերականգնմանը»՝ ամեն կերպ ընթացք տալով ու բարձրաձայնելով այս մասին, Բենեդիկտովը ավելի կտրուկ արտահայտվեց. «Առաջին՝ ես արտահայտում եմ իմ սկզբունքային դժգոհությունը Ադրբեջանի ԱԳՆ աշխատակիցների գործողությունների կապակցությամբ: Երկրորդ՝ ես պատրաստվում եմ նամակ գրել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին խնդրանքով՝ չեղյալ հայտարարել այդ որոշումը: Երրորդ՝ ես ուզում եմ հայտնել մեր ռադիոլսողներին, որ «Էխո Մոսկվի» ընկերության աշխատակիցները մեկնելու են այնտեղ, որտեղ ուղարկում է նրանց գլխավոր խմբագիրը, այլ ոչ թե այնտեղ, որտեղ կորոշեն Ադրբեջանի ԱԳՆ աշխատակիցները»: Որոշ ժամանակ անց արդեն Բենեդիկտովը պիտի սպառնա, որ «Էխո Մոսկվի»-ն այս հարցը բարձրացնելու է Եվրոպայի խորհրդի առջեւ: Գլխավոր խմբագիրը հավելեց, որ «եթե անգամ զանգեին ու զգուշացնեին, Ղարաբաղ գործուղվելու էր Բունտմանը». «Ես կարծում եմ, որ շաս շուտով Ղարաբաղը լինելու է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, եւ մեր ունկնդիրները արժանի են, որ մեր լրագրողները հարցազրույցներ վերցնեն այն մարդկանցից, որոնք որոշում են քաղաքականությունը այդ տարածաշրջանում: Մենք ենք որոշել եւ որոշում՝ որտեղ եւ ում գործուղենք», ասել էր Բենեդիկտովը:

Այս ամենը Բաքվին իհարկե չբավարարեց, եւ ադրբեջանցի լրագրողները ասուլիս հրավիրած Բաքվում ՌԴ դեսպանին «հարցախեղդ» արեցին: Դեսպան Դորոխինին այլ բան չէր մնում, քան ադրբեջանցի լրագրողների հարցերին ի պատասխան ասել, որ Բենեդիկտովն «իհարկե չափազանցրել է՝ ասելով, թե մենք ենք որոշում ում եւ որտեղ ուղարկել, եւ այնպես չէ, որ լրագրողներն ինչպես ցանկանան, այնպես էլ անեն»: Դեսպանի այս խոսքերն իրենց հերթին դարձան լուրջ քննարկումների առարկա: Նույն Բենեդիկտովը իր «զարմանքը» հայտնեց Բաքվում իր իսկ երկրի դեսպանի խոսքերի առնչությամբ: Բենեդիկտովից բացի՝ իրենց վրդովմունքը հայտնեցին որոշ ռուս մտավորականներ եւ գործիչներ: Այսպես. հայտնի ռուս հրապարակախոս Մաքսիմ Գանապոլսկին ընդգծեց, որ յուրաքանչյուր դեսպան պարտավոր է պաշտպանել իր երկրի քաղաքացիների շահերը, այլ ոչ թե հակառակը: Գանապոլսկին նաեւ նշել էր. «Իսկ ինչպե՞ս եք առաջարկում Ադրբեջանի տարածքով մտնել Ղարաբաղ, եթե սահմանները փակ են, եւ նրանց սահմանին անցակետեր չկան: Անօրինակա՞ն մուտք գործել Լեռնային Ղարաբաղ»: Կրկին հիշեցնելով դեսպանի պարսկանությունները՝ ռուս հրապարակախոսը հայտարարել էր. «Ռուսաստանում կա՞ն դիվանագետներ, որոնք պաշտպանում են իրենց քաղաքացիներին: Աուտ՜, Սերգեյ Լավրով, որտե՞ղ եք»:

Այս՝ թերեւս միջազգային սկանդալը դեռ ՌԴ արտգործնախարարին չի հասել, բայց Ռուսաստանի Լիբերալ-ժողովրդական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին այս հարցի կապակցությամբ պատշաճական նամակ է հղել Սերգեյ Լավրովին: Նամակում Ժիրինովսկին նախ ներկայացնում է իրավիճակը, հետո իր զայրույթն է հայտնում Բաքվում ՌԴ դեսպան Դորոխինի արած հայտարարությունների կապակցությամբ, ըստ որոնց՝ «Ադրբեջանն իրավունք ունի որոշելու՝ ում թույլատրել իր տարածք, ում ոչ»: Այնուհետեւ պնդում է, որ «դեսպան Դորոխինի խոսքերը ամենեւին էլ ՌԴ ԱԳ պաշտոնական դիրքորոշումը չեն», եւ պահանջում է ԱԳՆ ղեկավարից պաշտպանել արտերկրում գտնվող ռուսաստանցիներին. «Ռուսաստանն ունի զգալի ռեսուրսներ ու կարող է կիրառել համապատասխան դիվանագիտական միջոցներ իր քաղաքացիներին պաշտպանելու համար», Լավրովին հիշեցնում է Ժիրինովսկին:

Այս ամենից հետո՝ երեկ ռուսական «Տիպիկ դեպք» հանդիպման հյուր «Էխո Մոսկվի»-ի գլխավոր խմբագիր Ալեքսեյ Բենեդիկտովը հանդես է գալիս պարզաբանող ու խիստ կոպիտ հայտարարությամբ. «Ես նշեմ, որ Բունտմանի այցի համար հիմնականում գրոհում է ոչ թե Ադրբեջանի արտգործնախարարությունը, ոչ՝ Ադրբեջանի նախագահը եւ այլք, այլ գործընկեր՝ ադրբեջանցի լրագրողները: Դուք գժվե՞լ եք, գործընկերներ: Դա՞ է ձեր աշխատանքը: Ձեր աշխատանքն է լինել պետության լակո՞տը: Ձեր աշխատանքն է լինել պետության պաշտոնյա՞ն: Այդ դեպքում չե՞ք ուզում փոխել ձեր աշխատանքը եւ դադարել մեզ բան սովորեցնելուց: Ես միանգամից ասեմ՝ մենք պայմանավորվածություններ ունենք Ադրբեջանի ղեկավարության եւ որոշ ներկայացուցիչների հետ, եւ այս ողջ հիմարությունը, որ մեր շուրջը պտտվում է, ոչ մի կապ չունի այդ երկրի ղեկավարության հետ: Կարծում եմ, ձեզ չի զարմացնի, որ առաջիկայում «Էխո Մոսկվին» կլուսաբանի Ադրբեջանի բոլոր իրադարձությունները՝ ներսից: Եթե պետք լինի, Ղարաբաղ էլի կգնանք, եւ մեր ադրբեջանցի գործընկերներին չենք էլ հարցնի: Դա պետք է հասկանալի լինի ու եթե դուք կասարում եք ձեր պետության լակոտների դերը՝ դա ձեր խնդիրն է: Զբաղվեք դրանով առանց մեզ», եզրափակել է Բենեդիկտովը:

Եվ վերջում՝ մեկ հարց էլ մեր կողմից ադրբեջանցի մեր գործընկերներին՝ արդյոք Բենեդիկտո՞վն էլ հայ է...

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Սասուն Միքայելյանը՝ Ղարաբաղի հարցի մասին

Երեկ լրագրողներին հանդիպած **Սասուն Միքայելյանը** մի շարք հետաքրքրական մտքեր է հայտնել: Նրա խոսքով՝ իր ազատ արձակումից հետո նախկին ընկեր-ՀՀԿ-ականներից ոմանք իրեն այցելել են, ուրիշները՝ ոչ, շատերի երեսն ինքը չի ուզում տեսնել: Սերժ Սարգսյանին որպես մարտական ընկերոջ սպասում է՝ չի գալիս (այդպիսի հարց էր հնչել): Նա կրկնեց այն միտքը, որ ասել էր ազատ արձակման օրը. ՀՀԿ-ի հետ է եղել, եղել է ՀՀԿ փոխնախագահ, սակայն ինչ-որ պահի իր եւ ՀՀԿ-ի հայացքները չեն համընկել, եւ ինքը բարձրաձայնել է, որ այսպիսի թիմով եթե ընտրության գնան, ինքը նրանց հետ չէ. «Արդյունքում՝ երեք տարի, երեք ամիս, շնորհակալություն», ասաց: Մանվել Գրիգորյանի եւ այլ մարտական ընկերների հետ լավ հարաբերությունների մեջ է, իր կուսընկեր Ռազմիկ Զոհրաբյանի մասին էլ ասաց. «Ինքը Լենինի նկարին խոռ էր նայել, թե թարս էր նայել՝ բռնել-դատել էին, էսօր էլ մեզ շինել է հանցագործ, իրեն էլ սարքել է ալամ աշխարհի քաղաքանտարկյալ»: Ղարաբաղի համար կռված սպան ղարաբաղյան բանակցությունների մասին այսպես արտահայտվեց. «Ես այսօր գիտակցում եմ, որ Ղարաբաղի հարցում ոչ մի փոխզիջումային տարբերակ չկա, այսինքն՝ ոչ մի կարգավիճակ չկա: Ազատագրված տարածքները եթե հանձնեն, այսօր Ղարաբաղին կարգավիճակ չեն տալու, դրա համար ես ոչ մի հեռանկար չեմ տեսնում Ղարաբաղի հարցում փոխզիջելու»: Տեր-Պետրոսյանի՝ Արցախի խնդրի վերաբերյալ հանրահավաքում հնչած տեսակետի վերաբերյալ էլ նկատեց. «Ընդհանուր միտք է առաջարկել ղեկավարը, որ պետք է գնանք փոխզիջման տարբերակով: Ես՝ որպես պատերազմ անցած մարդ, բնականաբար դեմ եմ հող հանձնելուն: Եթե նախագիծ լինի քննարկելու, ես իմ տեսակետը կհայտնեմ: Եթե այս տարբերակով գնանք լուծման, կհայտնվենք Նախիջեւանի կարգավիճակում ու կկորցնենք նաեւ Ղարաբաղը»:

Մ. Խ.

Շարունակում են լքել ՀՀԾ-ն

Ըստ ՀՀԾ վարչության գործադիր քարտուղար Վահագն Հայոցյանի հաստատման՝ բացի ՀՀԾ վարչության նախկին նախագահ, ՀՀԾ վարչության անդամ Արարատ Զուրաբյանից՝ ՀՀԾ-ից հեռանալու դիմում է ներկայացրել նաեւ ՀՀԾ վարչության անդամ Հրաչ Հակոբյանը: ՀՀԾ-ից դուրս է եկել նաեւ վարչության նախկին անդամ, մարտի 1-ի գործով դատապարտված, Կենտրոնի թաղամասի նախկին տեղակալ Դավիթ Առաքելյանը: Այս երեքը, ինչպես նաեւ ՀՀԾ վարչության նախկին անդամներ Մասիս Այվազյանն ու Հովհաննես Ղազարյանը (այս երկուսը մտմտում են ՀՀԾ-ից դուրս գալու դիմում գրելու մասին) մտադիր են անդամակցել նոր ստեղծվող «Ազատ դեմոկրատներ» կուսակցությանը:

Ստորագրահավաք՝ Սեֆիլյանին քաղաքացիություն շնորհելու համար

Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի համակարգող Ժիրայր Սեֆիլյանին քաղաքացիություն շնորհելու պահանջով «Հայազն» երիտասարդների միաբանությունը երեկ բաց ստորագրահավաք սկսեց: Ստորագրությունները, ուղեկից տեքստով, կուղարկվեն նախագահ Սերժ Սարգսյանին. «Մենք՝ ներքոստորագրյալներս, բարձր ենք գնահատում Շուշի առանձնակի գումարտակի հրամանատար, Մարտական խաչի առաջին աստիճանի ասպետ Ժիրայր Սեֆիլյանի դերը մեր ազգային ինքնագիտակցության ամրապնդման, մեր հայրենասիրական դաստիարակության գործընթացում եւ խնդրում ենք ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ հաշվի առնելով մեր կարծիքը, Սեֆիլյանին տալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն», արձանագրվելու է ուղեկից տեքստում:

Մ. Խ.

ԱՄՆ-ը՝ արդարության ու Թուրքիայում «փոքրիկ առաջացնելու» արանքում

1-ին էջից

Էրդողանի վարչակազմն, ըստ Բերմանի, պարտավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել վերականգնելու եկեղեցական բռնագրավված ունեցվածքը եւ բոլոր քրիստոնեական համայնքներին՝ հայերին, հույներին եւ մյուսներին, թույլ տալ ազատորեն իրականացնել իրենց ծիսակատարությունները ու կրոնական կրթություն տալ: «Չի կարող լուրջ խոսակցություն լինել «թուրքական մոդել»-ի մասին, երբ խստրական քաղաքականության տեսակետը ներկա դրությամբ շարունակում են գոյություն ունենալ», ասել է Բերմանը:

Միեւնույն ժամանակ, «The Republic» պարբերականն իր երեկվա հրապարակմամբ տեղեկացնում է, թե որոշ տեղեկությունների համաձայն, Հայոց ցեղասպանության վերաներկայացված բանաձեւը նոր թափ կտա դիվանագիտական լարվածությանը, նկատի ունենալով ամերիկա-թուրքական հարաբերությունները: Ըստ հրապարակման, ԱՄՆ պետքարտուղարության գաղտնի հաղորդագրությունները հայտնում են, որ ներկայացված բանաձեւը միջազգային արձագանք կունենա:

Չնայած 16 տարի Ներկայացուցիչների պալատ ներկայացվող Ցեղասպանության ճանաչման բանաձեւերը չեն հասել հենց պալատի՝ WikiLeaks-ի հրապարակումների համաձայն, այդ բանաձեւերի նախագծերը հաջողել են՝ խթանելով դիվանագիտական շահախնդրությունը: Ասվածը ներկայացնելով որպես ԱՄՆ պետքարտուղարությանն ուղարկված հաղորդագրություն՝ հրապարակման մեջ նշվում է, որ Անկարայից 2010-ի հունիսի 26-ին ստացված հաղորդագրության համաձայն՝ «ԱՄՆ կողմից որեւէ սահմանում 1915 թ. իրադարձություններին որպես «ցեղասպանություն» Թուրքիայում քաղաքական փոքրիկ կառաջացնի, եւ կազդի մեր երկկողմ հարաբերությունների վրա՝ քաղաքական, ռազմական եւ առեւտրային ասպեկտները կավերվեն»: Գաղտնի հաղորդագրության մեջ նշվում են ամերիկյան ընկերություններ Sikorsky-ին եւ Raytheon-ը, որոնցից առաջինը ուղղաթիռ է ցանկանում վաճառել Թուրքիային, մյուսը՝օդային պաշտպանության համակարգ:

Հիշատակելով WikiLeaks-ի մեկ այլ բացահայտում՝ «The Republic»-ը հիշեցնում է, որ դեռեւս 2009 թ. հոկտեմբերի 13-ին ԱՄՆ պետքարտուղարություն գաղտնի հաղորդագրություն է գնացել Թել Ավիվից, հիշատակմամբ, որ Թուրքիայի ամենամյա խնդրանքը Իսրայելի աջակցության առնչությամբ ուղեկցվում է Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձեւը կանխարգելելով:

Կոնգրեսում հայկական թեմաներով այս նախաձեռնությանը հունիսի 15-ի համարում իսկույն արձագանքել էր թուրքական «Հյուրիեթը»:

Report.am-ի դեմ հաջորդ դատական նիստը կկայանա հունիսի 30-ին

Երեւանի Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում երեկ տեղի ունեցավ Հայկ Բաբուխանյանն ընդդեմ Report.am-ի երկրորդ հայցով նախնական նիստը: Երեկվա համարում «**Ազգը**» գրել էր, որ ՍԻՄ նախագահ Հայկ Բաբուխանյանը կայքին դատի է տվել Էդիկ Անդրեասյանի «Երբ զոռով հուշում են անհուշելին» հոդվածի ու դրա վերաբերյալ ընթերցողներից ստացված արձագանքների համար: Report.am-ից տեղեկացանք, որ նիստի ընթացքում հայցվոր կողմի ներկայացուցիչը նշել է, որ իրենց կողմն ունի հայցի ավելացում: Նրանք խնդրել են պարտավորեցնել պատասխանող կողմերին՝ կայքի հիմնադրին ու հոդվածագրին միասին վճարելու մեկ միլիոն դրամ: Այնուհետեւ «**Ազգը**» զանգահարեց **Հայկ Բաբուխանյանին**՝ նրանից եւս պարզաբանումներ ստանալու համար: Պարզվեց, որ ՍԻՄ նախագահը ոչ միայն ներկա չի եղել, այլեւ նույնիսկ չի հետեւել նիստին: Իսկ հարցին՝ ո՞րն է պարոն Բաբուխանյանի նման «անտարբերության» պատճառը, ՍԻՄ նախագահը պատասխանեց. «Ես ավելի կարեւոր գործեր ունեմ, ավելի կարեւոր հարցեր կան»:

Ինչեւէ, այս գործով հաջորդ դատական նիստը կայանալու է հունիսի 30-ին:

Ի. Պ.

Հուլիսի 2-5-ը՝ ոչ աշխատանքային

Այս տարվա հուլիսի 4-ի փոխարեն աշխատանքային օր կլինի հուլիսի 9: Նման որոշման նախագիծ է դրված կառավարության վաղվա նիստի օրակարգում: Այդ տեղափոխմամբ Հայաստանում 4 օր՝ հուլիսի 2-5-ը, կլինեն ոչ աշխատանքային, իսկ փոխարենը աշխատանքային կլինի շաբաթ՝ հուլիսի 9: Այս փոփոխությունը պայմանավորված է հուլիսի 5-ի՝ ՀՀ սահմանադրության տոնական օրով:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Զրույցարձ

«Արմենիա»-ն ունի իր փիլիսոփայությունը

«Արմենիա» առագաստանավ, ավելի ճիշտ՝ առագաստավոր սպորտանավ:

«Կենսաբանական» տեսակը՝ միակայմ շլյուզ: Ծնվել է Ֆրանսիայում: Ապրել է Իսպանիայում: Գրանցված է եղել Մալյորկա կղզում: Ծննդյան թվականը՝ 1990: Չգիտեմ ով է պատվիրատուն եւ ինչ խնդիրներ է դրել իր եւ նավի առջեւ: Հայտնի է միայն, որ ըստ տրամաբանության, նախատեսված է եղել ծովարշավների համար: Համենայն դեպս զբոսանքների ու ամեն տեսակի շրջագայությունների համար բոլորովին պիտանի չէ թեկուզեւ այն պատճառով, որ «հասարակ մահկանացուները», որոնց թվին են պատկանում կանայք ու երեխաները, չեն կարող տեղաշարժվել տախտակամածի վրա նույնիսկ անհողմության ժամանակ: Բոլոր մակարդակային թեքություններն ու կորությունները ստեղծված են նրա համար, որ ոչ թե արգելակեն, այլ նպաստեն նավի արագությանը: Բիոնիկայի կանոններով. գծերն ու ձեւերը «մտածված» են բնության կողմից, իսկ մարդը միայն պատճենում է:

Տեսեք, թե ժամանակակից օդանավերի թեւերը եւ ընդհանրապես իրենք ամբողջովին որքան նման են դելֆիններին: Փորձեք դելֆին թամբել: Կսահեք վայից: Այդպես էլ ժամանակակից արագընթաց կատերներն են: Ճիշտ է, մեր «Արմենիա»-ն մեծ վերապահումով կարող է արագընթաց համարվել: Սակայն բուն նավաղայանի երկարությունը եւ կայմինը, որը մեկուկես անգամ երկար է նավից, թույլ է տալիս մեծացնել բոլոր առագաստների ընդհանուր մակերեսը: Եվ ստացվում է, որ արագությունը եռակի ավելին է, քան «Կիլիկիա»-ինը: Բայց մենք երբեք ոչ մի զուգահեռ, ոչ մի համեմատություն չենք անցկացնում: Դա ոչ միայն անազնիվ կլիներ, այլեւ՝ անբարոյական: «Կիլիկիա»-ն կառուցված է հայերի ձեռքերով եւ առարկայացած հիշողություն է Կիլիկիայի մասին: Պատահական չէր, որ Եվրոպայի շուրջը յոթ ծովերով նավարկությանը նվիրված բոլոր երեք հատորներում էլ, առանց որեւէ միտիկայի, ես մշտապես զրուցել եմ հենց իր՝ նավի հետ: Գրականության մեջ ընդունված այդ հնարքը, որ հնարավորություն է տալիս պայմանական երկխոսության մեջ մտնել...անցյալի հետ, ինձ թույլ տվեց ընթերցողին ներկայացնել Կիլիկյան թագավորության հարստագույն պատմությանը, առանձնապես նրա հզոր նավատորմին նվիրված ամբողջ էջեր: Նման հնարք պարզապես անհնար է կիրառել ցանկացած այլ նավի առումով, առավելեւս երկրորդ անգամ:

«Արմենիա»-ի եւ իմ միջեւ, մեղմ ասած, ոչ պարզ հարաբերություններ ձեւավորվեցին: Ես լավ էի գիտակցում այն փաստը, որ «Կիլիկիա» նախագծի, ես կասեի՝ ազգային եւ պատմական բաղադրիչները ճնշում էին գործադրում ինձ վրա: Նրա ներքինը՝ բառիս ուղղակի եւ փոխաբերական իմաստով: Նրա կիլիկիական կերպարը: Նրա կոպիտ ֆնխթությունը: Այդ ամենն էր, որ ամենուր դեպի իրեն էր ձգում մեր հայրենակիցներին: Եվ ոչ միայն նրանց: Այո, ընդհանուր հաշվարկով մի ամբողջ տարի եւ նույնիսկ ավելի, մենք միմյանց մեջ էինք: Մենք՝ նավի մարմնում, նա՝ մեր հոգիներում: Եվ մեկ էլ հանկարծ՝ մի նավ, որ ահավոր տարբերության մեջ է նրանից, ինչ կուզենայինք ոչ միայն ունենալ, այլեւ տեսնել: Նույնն էր թե մեզ՝ անդարձ արեւհարված ու կոպտացած հերկողներիս նոր արդուկած ֆրակ հագցնեին՝ վառվռուն թիթեռնիկով: Սակայն այլ ելք չունեինք: Ողջ հասակով մեկ մեր առջեւ ծառացած էր անխուսափելիին համակերպվելու օրենքը: «Կիլիկիա»-ի նավարկության ողջ երրորդ փուլի ընթացքում մենք անդադար աշխարհաշուրջի մասին էինք մտածում: Այնտեղ իմ փոքրիկ բնիկ-խցիկում արդեն կախված էր ապագա շուրջերկրյա նավարկության երթուղու քարտեզը: Դեռ այն ժամանակ ես հաստատեցի մի ողջ ճամպրուկ նյութեր հավաքել այն արշավանքի մասին, որը դեռեւս 1985-86 թվականներին Մերոպ Մաշտոց անունն էր կրում ԱՄՆ-ում եւ Կանադայում ափյուռքի ճամփաներով երկարատեւ ուղեւորության ժամանակ: Այդ մասին մանրամասնորեն պատմել եմ իմ ամերիկյան հանրագումարային «Ճանապարհ» գրքում: Մի խոսքով, մենք պատրաստ էինք, ինչպես արդեն բազմիցս նշել եմ, ճամփորդություն սկսել 2008, նույնիսկ 2007 թվականին: Սակայն նավը հաջողվեց ձեռք բերել (առանց պետական բյուջեից մեկ ցենս իսկ վերցնելու) միայն 2009 թվականի սկզբին: Խոսքը մեր նավին է վերաբերում, եւ մեծ մեղք գործած չեմ լինի, եթե կրկնեմ որոշ մանրամասներ, որոնք արդեն նշել եմ նախորդ ռեպորտաժներում: Ողջ Եվրոպայով մեկ Սամվել Կարապետյանը սպորտանավ էին փնտրում՝ ծովարշավի գաղափարին հարմար: Դա նշանակում է, որ պետք է լինեին խանդովի միջնորդներ, ստանալու համար ընդհանուր նավասենյակի համապատասխան տարածք՝ աշխատելու եւ հանդիպումների համար: Նաեւ հարթ ու մուգ պետք է լինեին նավակողերը, որոնց վրա ցայտուն պետք է աչքի ընկնեին ողջ մեսրոպյան այբուբենը, հայկական խաչը, հավերժության նշանը, նավի խոշորատառ «Արմենիա» անվանումը: Իսկ նավախելին, հավուր պատշաճի, գրանցման նավահանգիստը՝ Երեւան: Եվ իհարկե, գլխավոր խնդիրը պետք է լիներ արագությունը, հիշելով, որ դա արդեն կախված է տախտակամածից՝ առանց որեւէ հարմարությունների դրա վրա ժամանակ կամ ժամանց անցկացնելու համար: Տախտակամած, որի եզրերին ելուստային շրջանակներ չեն լինի, որոնք ըստ էության նավ-ամրոցի պարիսպներն են: Եվ հիմա այդ պարսպի փոխարեն մենք ունենք զուգահեռաբար ամուր ձգված երկու բարալիկ պողպատալար, որոնց արանքով ոչ միայն Տարզանի պես խոշորակազմ Սամվել Կարապետյանը, այլեւ ծանրաքաշ ու սոթլիկ դելֆինը կանցնի: Բայց ամենաահավորը տարիքն է: Ես եւ «Արմենիա»-ն տարիքի առումով ուղղակի հարմար հերոսներ ենք Գինեսի գրքի համար:

...Մեկնարկից առաջ մի ամբողջ ամիս աշխատել ենք, ուղղակի ասած՝ ծովարշավային նավի վրա Վալենսիա նավահանգստում, որտեղ, ի դեպ, Սամվել Կարապետյանը ցույց տվեց, որ ոչ միայն բնածին ու աստվածաշնորհ նավապետ է, այլեւ հմուտ փայտագործ, ատաղձագործ: Այդ նա Հայկ Բաղալյանի եւ մյուս օգնականների հետ հմտաբար պատրաստեց մի քանի նույնիսկ շատ գեղեցիկ գրադարակներ, որոնք բավական պարզ, հմաստուն ու ճարպիկ կերպով գրքերն ու թղթապանակները պահում են փոթորկի ժամանակ վար թափվելուց:

Տես էջ 8

Ռմինգի բացառիկ սակագներ Orange գոտու երկրներում, Վրաստանում եւ Թուրքիայում

Ամառային արձակուրդն արտերկրում անցկացնող բաժանորդների համար Orange-ն սահմանում է ռմինգի բացառիկ սակագներ: Հունիսի 15-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը Orange գոտու երկրներում, Վրաստանում եւ Թուրքիայում մուտքային զանգերի մեկ րոպեի արժեքը կլինի ընդամենը 55 դրամ:

Orange գոտու մեջ են մտնում այն եվրոպական երկրները, որտեղ գործում են Orange Ֆրանս Տելեկոմ խմբի դուստր օպերատորները, ինչպիսիք են Orange Ֆրանսիան, Orange Իսպանիան, Orange Շվեյցարիան, Orange Միացյալ Թագավորությունը, Orange Լեհաստանը, Orange Ռումինիան, Orange Սլովակիան, Orange Մոլդովան, Orange Ավստրիան, Orange Լյուքսեմբուրգը, ինչպես նաեւ Mobistar-ը Բելգիայում:

Ավելին, Orange-ի բաժանորդները կարող են օգտվել միջազգային օպերատորի ընձեռած աննախադեպ հնարավորություններից ու Orange գոտում զանգահարել եւ զանգեր ընդունել բացառիկ՝ 250 դրամ/րոպե սակագնով: Այս գոտում գտնվող բոլոր երկրներում ելքային կարճ հաղորդագրության արժեքն է 200 դրամ, իսկ մուտքային SMS-ներն անվճար են:

Հայտարարություն

Հայաստանի Ավտոպահովագրողների բյուրոն եւ Ճանապարհային ոստիկանությունը տեղեկացնում են, որ մինչեւ ս.թ. հուլիսի 1-ը հաշվառված ավտոտրանսպորտային միջոցներ ունեցող այն քաղաքացիները, որոնք առ այսօր ԱՊՊԱ պայմանագրեր չեն կնքել կամ կնքված ԱՊՊԱ պայմանագրի ժամկետը արդեն ավարտվել է, այդ ավտոտրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու դեպքում չեն վճարի ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար օրենքով սահմանված տուգանքները:

Որոշման մանրամասներին կարող եք տեղեկանալ www.rea.am կայքի «Նորություն» տողից, ինչպես նաեւ կայքի շարժական գույք բաժնում տեղադրված Ավտոպահովագրողների բյուրոյի բաններից՝ այցելելով բյուրոյի կայք:

ՎԻԵՆՆԱ

Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը՝ Ավստրիայի հայոց թեմի առաջնորդ

Kathweb-ը՝ Ավստրիայի կաթոլիկական լրատվական գործակալությունը, իրազեկում է, թե Ավստրիայի Հայ առաքելական եկեղեցին նոր առաջնորդ ունի՝ Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, որ փոխարինելու է եկել հանգստյան կոչված Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Նաջարյանին կարգել է նաեւ Միջին Եվրոպայում եւ Սկանդինավյան երկրներում պատվիրակ: Նաջարյանի ծառայության շրջաններն Ավստրիայի հետ մեկտեղ ընդգրկում են Հունգարիան, Սլովակիան, Չեխիան, Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան ու Դանիան:

Նաջարյանը ծնվել է 1952-ին Հալեպում, հոգեւոր ծառայության է կարգվել 1973-ից: Ավարտել է Լոնդոնի Քինգզ քոլեջը, Շոտլանդիայում Սուրբ Էնդրյուզ եւ Նյու Յորքի Կոլումբիա համալսարանները: 1995-2000-ին եղել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի դեկանը, այնուհետեւ գործունեություն է ծավալել Անգլիայում եւ ԱՄՆ-ում: Միացյալ Նահանգների քաղաքացի է:

Արքեպիսկոպոս Գրիգորյանը ծնվել է 1932-ին Հալեպում: Նրա ղեկավարությամբ Վիեննայի հայ համայնքը կարողացավ Սուրբ Հռիփսիմե եկեղեցին եւ կից համայնքային կենտրոնը հաստատել եւ 1968-ին օծել:

Kathweb-ի ծանուցմամբ, Հայ առաքելական եկեղեցին այսօր շուրջ 6 միլիոն հավատացյալ ունի Հայաստանում, Մերձավոր Արեւելքում, Եվրոպայում եւ Ամերիկայում: Այժմ Վիեննայում ապրում են 3000 հայեր, ինչպես նաեւ փոքրաթիվ հայ ուսանողներ՝ Մերձավոր Արեւելքի երկրներից: Դաշնության մյուս երկրամասերում ապրում են մինչեւ 2000 հայ առաքելական քրիստոնյաներ՝ հիմնականում՝ ներգաղթյալներ Հայաստանից եւ Իրանից: Հայ առաքելական եկեղեցին պետականորեն ճանաչվել է Ավստրիայում 1972-ից:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հաստատվել է հայ կազակության հոգեւոր հովիվ

Հայ-կազակական բարեկամության եւ համագործակցության միջազգային միավորման (ՀԿ ԲՀՄՄ) լրատվական ծառայությունից երեկ հայտնեցին, որ ՀԿ ԲՀՄՄ նախագահության հրամանագրով, Մխիթար քահանա Ալոյանը հաստատվել է որպես կազմակերպության հոգեւոր հովիվ եւ ՀԿ ԲՀՄՄ գլխավոր ատամանի տեղակալ: Արարատի մարզի Մրգավան գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Մխիթար քահանա Ալոյանը ՀԿ ԲՀՄՄ հոգեւոր հովիվ է ձեռնադրվել 2011-ի ապրիլի 29-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի կարգադրությամբ: Կազակական կազմակերպությունը դիմել էր Մայր աթոռին՝ հոգեւոր ուսուցիչ տրամադրելու խնդրանքով: «Մենք մեծապես շնորհակալ ենք Վեհափառին՝ մեր խնդրանքին կառուցողական լուծում տալու համար: Այսպիսով, հայ կազակությունը Հայաստանում կազակական շարժման ողջ պատմության ընթացքում առաջին անգամ ստացավ Հայ առաքելական եկեղեցու աջակցությունը: Սա նշանակում է, որ մեր համագործակցությունը որակական նոր մակարդակի բարձրացավ, հարստանալով հոգեւոր հզոր բաղադրիչով», ասել է ՀԿ ԲՀՄՄ նախագահ, Միավորված հայ կազակության գլխավոր ատաման, կազակական զորքերի գեներալ-լեյտենանտ **Կարապետ Զադոյանը**:

Հ. Ա.

Եկող տարի «Հայջրմուղկոյուղին» կսկսի ներդրումային նոր ծրագիր

«Հայջրմուղկոյուղի» ընկերության տվյալների համաձայն՝ 2017 թվականին Հայաստանի մարզերում ջրամատակարարման միջին տեւողությունը կհասնի 18 ժամի: Ընկերության գլխավոր տնօրեն **Պատրիկ Լորենի** փոխանցմամբ՝ ներկայումս մարզերում ջրամատակարարման միջին տեւողությունն օրական 14 ժամ է. «Իսկ 2004-ին, երբ սանձնեցինք մեր առաքելությունը, ջրամատակարարման միջին տեւողությունը 6 ժամ էր»: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Պատրիկ Լորենը տեղեկացրեց, որ նույնիսկ որոշ քաղաքներում ու գյուղական համայնքներում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը ջրամատակարարում է ապահովում հանրապետության 37 քաղաքում եւ շուրջ 300 գյուղում: Հուրախություն սպառողների, Պատրիկ Լորենը տեղեկացրեց, որ ընկերությունն առաջիկայում ջրի սակագինը բարձրացնել չի պատրաստվում. «Իսկ ծառայությունների որակը բարելավելու համար մշտական ներդրումների կարիք ունենք, թեեւ մեր կատարած բարեկարգումների շնորհիվ վերջին տարիներին ոլորտում զգալի աճ է արձանագրվել»:

Եկող տարի «Հայջրմուղկոյուղին» կսկսի ներդրումային նոր ծրագիր, որի գլխավոր ուղղվածություններից մեկը լինելու է կոյուղու մաքրման կայանի շինարարությունը:

Ըստ Պատրիկ Լորենի՝ ջրամատակարարման համակարգը լիարժեք բարելավելու համար 1 միլիարդ դոլարի ներդրում է հարկավոր, իսկ մինչեւ այսօր ներդրվել է 100 միլիոն դոլար:

Ընկերության տնօրենը նաեւ տեղեկացրեց, որ բացվել է բաժանորդների սպասարկման կենտրոն, որը գտնվում է Վարդանանց փակուղի 8Ա հասցեում: Իրենց անհանգստացնող հարցերով ու խնդիրներով բաժանորդները կարող են դիմել կենտրոն՝ զանգահարելով 1-17: Պատրիկ Լորենի փոխանցմամբ՝ այս ծառայության միջոցով բարձրացված հարցերն իրենց արձագանքն ու պատասխանը կստանան 24 ժամվա ընթացքում:

Ի. Պ.

Մեկամյա անվճար ակնաբուժական հետազոտություններ

Գլաուկոմայի վաղաժամ հայտնաբերման եւ կանխարգելման նպատակով Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի ակնաբուժական կլինիկան հունիսի 14-ից իր ենթակայության 20 պոլիկլինիկաներում իրականացնում է անվճար սկրինինգ հետազոտություններ՝ ALCON դեղորայք արտադրող ընկերության աջակցությամբ: Ակնաբույժների հավաստմամբ՝ նախնական շրջանում գլաուկոման ընթանում է գրեթե առանց ախտանշանների, ուստի 40 տարեկանից բարձր անձանց խորհուրդ է տրվում ակնաբուժական հետազոտություն անցնել:

Ակցիան տեւելու է մինչեւ հուլիսի 15-ը:

Մ. Մ.

Շարունակվող կենսագրություն

Միհրան Խաչատրյանի 80-ամյակը

Թվում էր՝ երեկ էր, երբ ծանոթացա երիտասարդ, եռանդուն, ժպտերես, կենսախնդությամբ լի Միհրան Խաչատրյանի հետ մեր՝ Թալիհ գյուղում 1962 թվականին: Այդ ժամանակ ես ուսանող էի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, իսկ նա արդեն Ղարաբաղում ճանաչված ղեկավար աշխատող էր: Մտերմիկ զրույցից իմացա, որ ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Ուխտաձոր (Էդիլլու) գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1949 թ. ընդունվում եւ 1953 թ. գերազանցությամբ ավարտում է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1962 թվականին ավարտել է նաեւ ՍՄԿԿ կենտկոմին առընթեր բարձրագույն կուսակցական դպրոցը (Մոսկվա): 1953 թ.-ից երկար տարիներ (1953-1968 թթ.) աշխատել է Ղարաբաղում, վարել մի շարք ղեկավար պաշտոններ, եղել է կոմերիս մարզկոմի առաջին քարտուղար, հեռուստատեսության եւ ռադիոյի մարզային կոմիտեի գլխավոր խմբագիր, կուսակցության մարզկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ: Նա ոչ միայն բարձր պաշտոններ էր զբաղեցրել, այլեւ հետեւողականորեն նպաստել էր հայապահպանության գործին:

60-ական թվականներին ազգամիջյան հարաբերությունների լարված ժամանակաշրջանում մարզի հասարակական քաղաքական կյանքը գտնվում էր Ադրբեջանի կուսակցության կենտկոմի խիստ վերահսկողության տակ, մարզը հայաթափելու ծրագիր իրականացնում, պաշտոններից հեռացնում էին աչքի ընկած հայրենասեր մտավորականներին, նրանց փոխարեն նշանակում իրենց դրածոներին: Ահա այս ծանր պայմաններում Միհրան Խաչատրյանը, որպես կուսակցության մարզկոմի գաղափարական բաժնի ղեկավար իր սկզբունքային դիրքորոշմամբ ու համարձակ ելույթներով, մի խումբ հայրենասեր մտավորականների հետ հայրենանվեր մեծ աշխատանք է կատարել հայկական ազգային ոգին, ազգային դիմագիծը պաշտպանելու, մայր հայրենիքի հետ հոգեւոր կապը ամուր պահելու համար: Տարիներ շարունակվող այդ գործունեությունը աննկատ չի մնացել Ադրբեջանի իշխանություններից: 1968 թ. նա մեղադրվում է ազգայնականության մեջ եւ Ադրբեջանի կուսակցության կենտկոմի կարգադրությամբ ազատվում պաշտոնից: Նույն թվականի սեպտեմբերին նա ստիպված թողնում է Ղարաբաղը, տեղափոխվում Երեւան եւ աշխատանքի անցնում Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնում որպես դասախոս: 1969 թ. այս ամբիոնում պաշտպանում է թեկնածուական, իսկ 1990 թ. դոկտորական ատենախոսություն եւ ստանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Արտակարգ հետաքրքրական է նրա գիտական հետազոտությունների ընտրած բնագավառը՝ մարդու կերպարը փոփոխվող աշխարհում, նրա ներուժի իրացման սոցիալական պայմանները եւ անձնային շարժառիթները: Լույս են տեսնում նրա տասնյակ գիտատեսական հոդվածները, որոնք ոչ միայն նորություն էին նշված թեման մշակելու բնագավառում, այլեւ հաճախ ուղի հարթող հետագա ուսումնասիրության նոր հարցադրումներով:

Մ. Խաչատրյանը շուրջ 40 տարի դասավանդում է Երեւանի պետական համալսարանում: Բացի «Փիլիսոփայություն» առարկայի ընդհանուր դասընթացից, վարել է նաեւ «Անձի սոցիոլոգիա», «Սոցիալական մարդաբանություն», «Լեզվի փիլիսոփայություն» հատուկ դասընթացներ փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետում, համալսարանի տարբեր ֆակուլտետների ասպիրանտուրայի եւ մագիստրատուրայի բաժիններում: Նա միշտ ակտիվորեն մասնակցել է համալսարանի կյանքին: Եղել է արտասահմանյան քաղաքացիների ուսուցման գծով դեկան, համալսարանի մեծ խորհրդի, փիլիսոփայության, հոգեբանության ֆակուլտետի խորհրդի անդամ, «Փիլիսոփայության հարցեր» միջբուհական ժողովածուի պատասխանատու քարտուղար, փիլիսոփայության գծով դասախոսների որակավորման մեթոդական խորհրդի նախագահ:

Պրոֆ. Մ. Խաչատրյանը մեծ ներդրում ունի նաեւ երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում: Նա Երեւանի պետական համալսարանում եւ ՀՀ ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավունքի ինստիտուտում գործող գիտական ասպիրանտներ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամ է: Մ. Խաչատրյանը եղել է

տասնյակ թեկնածուական, դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, մենագրությունների, ուսումնական ձեռնարկների գրախոս, խմբագիր: Այսօր նա 80 տարեկան է, սակայն շարունակում է իր գիտական եւ մանկավարժական գործունեությունը: Նա մեծ հարգանք է վայելում իր գործընկերների եւ ուսանողության շրջանում: Մարդամոտ է, բարեհամբույր:

Այդման խոր ուսումնասիրելով մարդու հոգեւոր կյանքը հարափոփոխ ընթացքում, բազմաթիվ ծանրակշիռ խոչընդոտներ հաղթահարելով, թվում է՝ տասնյակ գիտական աշխատություններին զուգահեռ (իմ ներքին զգացողությամբ) նա իրավունք ուներ գրելու կենսատու, հյութեղ ասույթներ, սուր դիտողականությամբ լեցուն թեւավոր խոսքեր: Ըստ իս, նա ուներ այդ անսպառ պաշարները, սիրում է այդ բոլոր, բազմակողմանի գիտելիքները փոխանցել իր ուսանողներին ու ասպիրանտներին, երիտասարդ գիտնականներին, գուցե առանց դույզն-ինչ մտածելու, որ իր գրավոր եւ բանավոր խոսքով կարող է ստեղծել իր ապրածի ու զգացածի հրաշալի կենսամատյան: Ի դեպ, նա հազվադեպ է հետահայաց մտքեր արտահայտում (գուցե թերեւս առանձին հուշերում): Նրա հայացքը միշտ ուղղված է առաջ: Հենց դա է պատճառը, որ նա որոնում է մարդու տիեզերական կերպարը, սուզվում նրա հոգեկան խորխորատները, հասնում ներքնատեսության, եւ համոզված լինելով, որ մարդը ներհակ ուժերի շտեմարան է, երբեք չի հասնելու իր երազած իդեալին՝ հոգեկան հավասարակշռությանը կամ ներդաշնակության, Լեսինգի նմանությամբ մեզ համոզում է, որ եթե մարդը չհասնի էլ իր որոնած ճշմարտությանը՝ իդեալին, ապա միեւնույնն է, նրա կյանքը իմաստ ու հեռանկար է ստանում այդ իդեալը անվերջ որոնելով: Ահա թե ինչու նա գիտական տասնյակ աշխատություններ գրելով հանդերձ, մի հարցազրույցի ժամանակ մտահոգություն է հայտնում, որ մարդն օգտագործում է իր մտավոր ներուժի մի չնչին մասը:

Միհրան Խաչատրյանն առաջիններից մեկն է, որն ամբողջ խորհով ուսումնասիրեց անձի հոգեբանական դրսեւորումների վիճակը փոփոխվող հասարակարգերի պայմաններում, նրա ինքնահաստատման դժվարություններն ու նոր փորձությունները: Այդ հարցերին են նվիրված վերջին տարիներին լույս ընծայված նրա մի շարք հոդվածներ:

Մ. Խաչատրյանի ուսումնասիրության արդյունքները լույս են սփռում բազմաթիվ չլուսաբանված հիմնախնդիրների վրա: Իր տված հարցազրույցներից մեկում Միհրան Խաչատրյանը այն միտքն է արտահայտում, որ կյանքն իմաստավորող, մարդու մեջ մարդկայինը պահպանող, բոլոր ոլորտներում առաջադիմություն ապահովող հուսալի երաշխիքն ու անանցողիկ արժեքները կապված են հոգեկանի, բարոյականի, չիրացված ներքին հնարավորությունների բացահայտման եւ իրացման հետ: Նրա կատարած ուսումնասիրությունները զուտ տեսական չեն, այլ ունեն գործնական նշանակություն, որովհետեւ այդ ներուժը զարգացնելով ու նպատակասլաց օգտագործելով կարելի է հաջողությամբ լուծել հասարակության եւ նոր սերնդի առջեւ ծառացող բազմաթիվ հիմնախնդիրները:

Նա մեր դարաշրջանի մարդու իդեալի մասին ասում է, որ «մարդաբանական տեսությունները դեռեւս չեն տիրապետում եւ չեն կարողանում հասու լինել մարդու էության գաղտնիքներին»: Սա ոչ թե հոռետեսության, անհեռանկար ապագայի մասին ճիչ է, այլ խորազնին, համակողմանի ուսումնասիրության արդյունք: Եվ նա իրավացի է լիովին:

Մ. Խաչատրյանը իր գիտական-մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեության ասպարեզում ունեցած հաջողությունների համար արժանացել է 1998 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի «Տարվա մարդ-1998» կոչման: Այդ բոլորով հանդերձ նա չի բավարարվում իր ուսումնասիրությունների արդյունքով, որովհետեւ մարդը դեռեւս մնում է առեղծված իր ստեղծագործական դրսեւորումների մեջ, եւ կրկին միակ հույսը մնում է իդեալին ձգտելը:

Ի վերջո, կուզեի ասել իմ անվանի ընկերոջն ու գիտնականին, որ նա մի օր նստի, գրի առնի նաեւ իր համով-հոտով զրույցները, ժողովրդական ասույթները, հատկապես իր մեկնաբանությամբ, եւ այդ ամենը ներկայացնի որպես իր ապրած իմաստալից ու արժանապատիվ կյանքի կարդացվող ու չինացող գիրք...

ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ
բանասեղծ,
մշակութաբանության
դոկտոր

Փեդրո Մուրադեանի նոր նշանակումը

Յունիս 10ին, Արժանթինի նախագահուհի՝ Քրիսթինա Ֆերնանտէս-Քիրչնէր, 180 օրուան ժամանակաշրջանի մը համար Փեդրո Մուրադեանին նշանակեց խտրականութեան, օտարատեցութեան եւ ցեղապաշտութեան դէմ ազգային ինստիտուտի միջամտութեան գործակալ, սոյն մարմնի նախագահ՝ Քլաուդիո Մորգադոյի եւ փոխնախագահ՝ Մարիա Ռաշիդի հրաժարականներէն ետք:

Փեդրո Մուրադեան, որ վերջերս նշանակուած էր խտրականութեան դէմ քաղաքականութեան հետազօտական եւ դատիարակման համադրող, նախապէս եղած էր Ի.Ն.Ա.Տ.Ի.ի փոխ-նախագահ, չորս տարուան համար: Ան նաեւ կարեւոր դեր ունեցած է միջազգային ամբիոններու մէջ որպէս խտրականութեան դէմ պայքարի արժանթինցի մասնագէտ, եւ անցեալ դեկտեմբերին հրաւիրուած՝ ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբին կողմէ, միջազգային այլ 12 մասնագէտներու կարգին, մասնակցելու համար անդամ պետութեանց ուղղուած հակախտրական քաղաքականութեան ուղեգծի մը մշակման ծրագրին:

2010 թուականին Մուրադեան մաս կազմեց Արժանթինի պաշտօնական պատուիրակութեան,

Պեդրո Մուրադյանը նախագահ Քրիստինա Ֆերնանդեզ դի Քիրշների հետ

ՄԱԿ-ի Ցեղական խտրականութեան վերացման յանձնախումբի առջեւ ներկայացուելիք 19րդ եւ 20րդ տեղեկագրերու կապակցութեամբ:

Մարդկային իրաւունքներու ի նպաստ պայքարի իր գործունէութեան վերաբերեալ, Փեդրո Մուրադեան եղած է ՀՅԴ Հարաւային Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի տնօրէն (2002-2006), խտրականութեան դէմ պայքարող ոչ կառավարական կազմակերպութեանց ամբիոնի նախագահ (1998-2003), եւ Մարդկային իրաւանց ի նպաստ մնայուն խորհուրդի նախագահական մարմնի անդամ: 2010 թուականին, Արժանթինի հէական կազմակերպութեանց համախմբումը, ինչպէս նաեւ Իսլամական կեդրոնը զինքը մեծարեցին մարդկային իրաւունքներու ուղղութեամբ տարած իր աշխատանքին համար:

ՐՈՒԱՐԻՉԱԿ

Պետական լեզո՞ւ, թե՞...

Խոսքս վերաբերում է մայրենի լեզվի անաղարտությանը: Հայոց լեզուն մեզանում հաճախ անտեսվում է՝ սկսած մեծադիր գովազդային վահանակներից, խանութների անվանումներից, եւ աղավաղվում է հեռուստատեսային որոշ հաղորդումներում: Ինչ խառնիճաղանջ լեզվով են մատուցում այդ անճաշակ, գավառային, ոչինչ չասող հաղորդումները («32 աստմ», զանազան ակումբներ եւ այլն): Հիմա ոմանք կարող են առարկել, թե այդ մասին շատ է խոսվել, նաեւ գրվել: Ամենեւին դեմ չեմ: Սակայն ի՞նչ է փոխվել: Խոսքս, մասնավորապես, ուզում եմ ուղղել հայոց խորհրդարանի պատգամավորներին: Ճիշտ է, դուք բազմազբաղ գործիչներ եք, բայց եկեք մի փոքր ժամանակ հատկացնենք մեր հինավուրց լեզվին: Ի՞նչ կարող է անել մի լեզվի տեսչությունն, որն իր սուղ հնարավորություններով ամենուրեք, ամեն քայլափոխի ոտնահարվող մայրենիի պաշտպանի դերում է հանդես գալիս: Տվեք նրան լայն հնարավորություններ, եւ որոշ ժամանակ անց արդյունքները տեսանելի կլինեն: Դե՛, ինչ կարելի է ասել, երբ մեր պաշտոնատար անձանցից շատերը էկրանից խոսում են «գնում ա», «գալիս ա», «ութանասուն» եւ նմանատիպ խոսելաձեւով, դրանով իբր ցույց են տալիս իրենց անմիջականությո՞ւնը: Նույնը նաեւ որոշ լրագրային հոդվածներում: Խորհրդային ժամանակներում պայքարում էինք ռուսերենի անհարկի օգտագործման, ազդեցության դեմ: Այժմ էլ՝ անգլերենի՞: Օտարամոլությո՞ւն: Ոչ ոք դեմ չէ լեզուների իմացությանը: Բայց ոչ մայրենիի հաշվին: Ժողովուրդն ասում է՝ քանի լեզու գիտես, այնքան մարդ ես: Հարկ է հասնել հայոց լեզվի հիմքի վրա օտար լեզուների ուսուցման բարձր որակի ապահովմանը:

Ի՞նչ ենք փոխանցում մատաղ սերնդին:

Գույները խառնո՞ւմ եմ: Միգուցե:

Հսկայական գովազդային վահանակներին, օտարալեզու բառերի կողքին, հաճախ կամ իսպառ բացակայում է հայերենը, կամ էլ, լավագույն պարագայում, փոքրիկ տառերով, քիչ տեսանելի անկյունում ծվարած՝ տվյալ խանութի (մարկե՞տ) հասցեն միայն:

Քանմեկերորդ դարի այս համահարթեցման պայմաններում անտեսվում եւ երբեմն հալածվում է մեր հայոց լեզուն համայն հայության մայրաքաղաքում:

Ընդունված կարգ է, ցուցանակներում նախ գրվում է տվյալ երկրի մայրենի, պետական լեզվով, ապա ուրիշ լեզուներով: Մեզ մոտ հաճախ կարելի է հանդիպել հակառակ իրողությանը: Մենք փոքր ազգ ենք եւ պետք է ամենօրյա հոգ տանենք մեր լեզվի մասին, շռայլություն չանենք:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո մեր հարեւանները կարողացան իրենց այբբենական համակարգը այնպես շտկել, որ իրենց արյունակից եղբայրների հետ հեշտությամբ են հաղորդակցվում: Իսկ մեր սփյուռքահայությունը գրավոր խոսքում պատշաճ ձեւով չի կարողանում հաղորդակցվել մեզ հետ, որովհետեւ որոշակի, ճիշտ է՝ ոչ մեծ, տարբերություն գոյություն ունի ավանդական եւ խորհրդային ձեւափոխված գրելաձեւերի միջեւ: Ժամանակը չի՞ եկել, արդյոք, այս մասին եւս խորհելու, ինչու չէ, նաեւ գործելու, որ ունենանք միասնական գրելաձեւ, համակարգ:

Լեւոն Շանթի, Կոստան Զարյանի, Վահրամ Փափազյանի լեզուն անուշ, քաղցրիկ հայերենն է՝ արեւմտահայերենի եւ արեւելահայերենի փառահեղ զուգակցմամբ:

Անցնենք գործի, որ մեր պատմական հայրենիքից զրկված, աշխարհասփյուռ զավակները ավելի հեշտ հաղորդակցվեն մեզ հետ, հեշտությամբ կարդան Թումանյան, Իսահակյան, Սեւակ, Շիրազ... Չէ՞ որ նրանց աչքերը՝ հառած մայր հայրենիքին, այստեղից են ստանում իրենց ավիշը, ոգին, ուժն ու կորովը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲՅԱՆ
Վետերան-մանկավարժ

Ղեհիդների հուշարձան Ալանիայում

Դա կկառուցվի «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախաձեռնությամբ

Ալանիան որպես փոքրիկ քաղաք Անթալիա նահանգի առափնյա վարչական շրջանում է: Խնդրո առարկա հուշարձանը կկառուցվի շրջանային այս կենտրոնի Քեսթել քաղաքում: Հուշարձանի կառուցումը, ինչպես երեկ նշել է «Յուրիթեթը», նպատակ է հետաքրքրում հավերժացնել Ալանիայի այսպես կոչված այն 258 նահատակների հիշատակը, որոնք զոհվել են Առաջին համաշխարհային պատերազմում, ինչպես նաեւ ենթարկվել են ահաբեկչության:

Ըստ թուրքական թերթի, հուշարձանի կառուցման այս նախագծին նախ աջակցել է Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարության գեղարվեստի գլխավոր վարչությունը: Նախաձեռնողը, ամենայն հավանականությամբ, «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» միությունն է, քանի որ միության գործադիր խորհրդի նախագահ **Յուսուֆ Յըլմազը** հայտարարել է «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ավազակախմբերի հետ մարտնչելիս նահատակված 258 զինվորների հիշատակը հավերժացնելու նպատակով հուշարձանի կառուցման» մասին:

Այնուհետեւ Յըլմազն ասել է. «Հուշարձանի կառուցման նախագծի արժեքը ավելի քան 281 հազար լիրա է: Քեսթելի քաղաքեսարանի միջոցով ֆինանսական օգնություն ենք խնդրել մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունից, որի գեղարվեստի վարչությունը 35 հազար հատկացրեց: Մնացած գումարը լրացնելու ենք բնակիչների, քաղաքեսարանի, կուսակցությունների քաղաքային վարչությունների հանգանակությամբ»:

Հուշարձանը, ինչպես Յըլմազն է նշել, լինելու է գրանիտից, նախատեսվում է դրա լուսավորումը, այսպես կոչված նահատակների հիշատակը ճշտելու համար միությունը դիմել է թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբին, որպեսզի «նահատակների անունները հուշարձի վրա արձանագրելու միջոցով հնարավոր լինի ուշադրություն հրավիրել ցեղասպանության հայկական պնդումների անհիմն լինելու հանգամանքին»:

Ի դեպ, «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» միությունը ծրագրել է նաեւ համանման հուշարձանների կառուցումը Անթալիայի Էլմալը եւ Մանավգաթ շրջանային կենտրոններում: Այս շրջանները եւս զբոսաշրջության ափսույժ կենտրոններ են, ինչպես Անթալիան ու Ալանիան: Դրանք գրավիչ վայրեր են նաեւ հայ զբոսաշրջիկների համար, հանգամանք՝ որը ոչ մի նշանակություն չունի հիշյալ շրջանի քաղաքային իշխանության համար:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ինչո՞ւ Սակաշվիլին չի սիրում իր ժողովրդին

Տարբեր բնագավառների նշանավոր մարդկանց հայացնելու (հաճախ՝ միանգամայն անհարկի) հայասանցիների հրապուրանքը տալիս է իր բացասական արդյունքները: Օրերս վրացի ճանաչված ռեժիսոր Ռոբերտ Ստուրուան իր հարցազրույցներից մեկում, ոչ ավել, ոչ պակաս, «ցավով» հայտարարեց, որ Սակաշվիլին վրաց ժողովրդին չի սիրում, որովհետեւ... հայ է: Նրան Վրաստանում իշխանության գլուխ է բերել Ամերիկայի հայկական լոբբին, եւ Ամերիկայի նպատակն է Սակաշվիլու ձեռքով ոչնչացնել Վրաստանը: Ռուսական մամուլը առանձնակի իրոնիայով է վերապատմում Ներանդրկովկասյան այս էկզոտիկ ասուլիսի ողբերգակատակերգական արձագանքները:

Անշուշտ, վրացական ընդդիմությունը միշտ էլ թիրախ է դարձրել Սակաշվիլու էքսիկական ծագման հարցը: Դե, դրա համար էլ ընդդիմություն է՝ ոչինչ դրական չի կարող լինել իշխանությունը մարմնավորողի մեջ, առավել եւս, որ նա օտարածին է: Սակայն հազիվ թե այդ հարցը հրատապ էր, երբ Սակաշվիլին իր եվրոամերիկամետ (հակառուսական) քաղաքականությամբ վրացիներին համոզում էր այդ քաղաքակրթությանը նրանց պատկանելու անվերապահության մեջ: Այլ է պատկերը հիմա, երբ հազարավոր մարդիկ ցասումնալից ելույթներ են ունենում իրենց ղեկավարի «բռնապետական» կեցվածքի, «պատմական» հողերը կորցնելու մեջ եւ այլն: Այս դեպքում արդեն Սակաշվիլին Վրաստանին ատում է, որովհետեւ վրացի չէ (այս տրամաբանությամբ երեւի ամենաթունդ հայը պիտի լիներ Գամսախուրդիան, որը վրացիներին բաժանեց երկու մասի՝ քաղաքացիական կռիվ հրահրելով նրանց միջեւ):

Ինչեւէ, վրացիների դատողությունները թողնենք իրենց եւ դառնանք, բառի ոչ բուն իմաստով, մեր ոչխարներին: Իսկ չէ՞ որ Հայաստանում Սակաշվիլու հայածինությունը տարփողողները արջի ծառայություն են մատուցում առաջին հերթին վիրահայերին, նրանց դարձնելով տիաճ խոսակցությունների ու գործողությունների վկաներ: Ժամանակը չէ՞ վերջ տալու գոնե այս անձանց հայացնելու էժանագին մարզանքներին, որոնք իրենք երբեք դա չեն ընդունում: Եթե նույնիսկ իրոք հայկական արմատներ ունեն: «Անմոռանալի, անզուգական» Ֆիլիպ Կիրկորովի պես:

Ռուսաստանում, օրինակ, երբեք Օբամային ռուս չեն համարում, աղերսներ չեն փնտրում, ասենք, Հյուսիսային Կովկասում, թեեւ հաճախ են նրան հորջորջում... Բարաք Հուսեյնովիչ ազգայնափայլ անունով:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

Իտալիան ԵՄ-ում առաջատար է դարձել անօրինական ներգաղթի գծով

Եվրոմիությունում Իտալիան այժմ առաջին տեղում է երկիր մուտք գործող անօրինական ներգաղթյալների թվով: ԵՄ Frontex սահմանային գործակալության տվյալներով, 2011-ի առաջին երեք ամիսներին Եվրոմիություն մտած 32906 գաղթյալների 2/3-ը փորձել է Եվրոպա թափանցել Իտալական Լամպեդուզա կղզուց:

BBC-ն հիշեցնում է, որ մինչեւ վերջերս ընդհատակյա ներգաղթի հիմնական ալիքն անցնում էր թուրք-հունական սահմանով: Բայց ներկայումս Լիբիայում եւ Թունիսում տիրող բարդ իրադրության պատճառով կտրուկ աճել է այն մարդկանց թիվը, որոնք Հյուսիսային Աֆրիկայից փախչում են Իտալիայի միջերկրածովյան Լամպեդուզա կղզի:

Համեմատության համար նշենք, որ 2010 առաջին երեք ամիսներին Իտալիա մտնելու փորձ կատարելիս կալանավորվել է 147 մարդ, իսկ Հունաստանի սահմանի մոտ՝ 13085 մարդ:

Սակայն այս տարվա մարտից սկսել է անշեղորեն աճել Լամպեդուզա կղզի հասնող գաղթականների թիվը: Իտալիայի ափամերձ պատշգամբների ներկայացուցիչների խոսքերով, միայն հունիսի 11-ին կղզուն մոտեցած 7 նավակներում եղել է ավելի քան 1500 մարդ: Նրանց մեծամասնությունը Լիբիայից է:

Գերբեռնված եւ անբավարար հանդերձավորված նավակներով Եվրոպա հասնելու փորձեր կատարելիս արդեն զոհվել են հարյուրավոր մարդիկ: Կղզու ժամանակավոր ճամբարներում տեղերը չեն բավականացնում: Մեծ թվով անօրինական ներգաղթյալների առկայությունը հարուցում է կղզեբնակների դժգոհությունը:

Լամպեդուզա կղզու մշտական բնակչությունը մոտ 6 հազար է: Մարդկանց եկամուտների գլխավոր աղբյուրն ավանդաբար եղել են հարուստ զբոսաշրջիկները, որոնց փոխարեն այժմ ներկա են հազարավոր աֆրիկացի գաղթականներ:

Պ.Ք.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Պարսից ծոցում կառուցվում է ԿՀՎ գաղտնի ավիաբազա

Կենտրոնական հետախուզական վարչությունը Պարսից ծոցում գաղտնի ավիաբազա է կառուցում անօդաչու թռչող սարքերի համար: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով ամերիկյան հատուկ ծառայությունների բարձրաստիճան ներկայացուցիչների:

Նոր ավիաբազայում տեղաբաշխվելիք անօդաչու օդանավերը «Ալ Ղաիդայի» գրոհայինների դեմ կօգտագործեն Եմենում եւ տարածաշրջանի այլ երկրներում, պատմել են գործակալության աղբյուրները, չցանկանալով հրապարակել իրենց անունները: Ասոշիեյթեդ պրեսը անվտանգության նկատառումներով չի բացահայտում կառուցվող ավիաբազայի տեղը:

Անօդաչու օդանավերի համար հատուկ ռազմակայան կառուցելու որոշումը պայմանավորված է այն վտանգով, որ Եմենում կարող են իշխանության գալ հակաամերիկյան ուժեր: Եմենի ներկայիս կառավարությունը նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի գլխավորությամբ ԱՄՆ-ի հետ համագործակցում է հակաահաբեկչական պայքարի ասպարեզում: Մասնավորապես 2009-ին Եմենը ամերիկացիներին թույլատրեց անօդաչու թռչող սարքեր օգտագործել երկրի տարածքում «Ալ Ղաիդայի» հետ կապված թիրախներին հարվածելու համար:

Սակայն 2011-ի հունվարին Եմենում սկսվեցին զանգվածային հակակառավարական ելույթներ, որոնց մասնակիցները պահանջում էին երեք տասնամյակ իշխող նախագահ Սալեհի հրաժարականը: Մայիսին սկսվեցին նախագահի կողմնակիցների եւ հակառակորդների զինված բախումներ: Ի դեպ, ընդդիմության կողմն են անցել զինվորական որոշ ստորաբաժանումներ: Հունիսի 3-ին Սալեհը մայրաքաղաք Սանայում վիրավորվեց հրետակոծությունից եւ մինչեւ օրս բուժվում է Սաուդյան Արաբիայում:

ԱՄՆ-ը առաջին անգամ անօդաչու օդանավեր օգտագործեց Պակիստանում ահաբեկիչների դեմ մղվող պայքարում: Այս սարքերի հարվածներից սպանվել է մոտ 1400 ահաբեկիչ:

Պաղեստինի նոր կառավարությունը կազմված կլինի հունիսի 21-ին

«Ֆաթհ» եւ «Համաս» շարժումները հունիսի 21-ին կներկայացնեն Պաղեստինի ազգային միասնության նոր կառավարության կազմը: Կահիրեում կայանալիք արարողությանը ներկա կլինեն Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը եւ «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալիդ Մաշալը: Համապատասխան պայմանավորվածություն է ձեռք բերվել Կահիրեում պաղեստինյան երկու խմբավորումների պատվիրակությունների բանակցությունների ընթացքում, նշում է newsru.co.il կայքը:

«Բանակցություններին Մաշալի եւ Աբբասի մասնակցությունը կնպաստի դրանց հաջողությանը, կրճատելով որոշումների ընդունման համար անհրաժեշտ ժամանակը: Քանզի պատվիրակությունները ստիպված չեն լինի բանակցությունն ընդհատել ղեկավարության հետ խորհրդակցելու համար: Չի կարելի ժամանակ կորցնել: Համաձայնությունը մոտալուտ է ավելի, քան երբեւէ», հայտարարել է «Ֆաթհ»-ի պատվիրակության ղեկավար Ազամ ալ Ահմադը, որի խոսքը մեջբերում է WAFA գործակալությունը:

«Ալ Ջազիրա» հեռուստաընկերության տվյալներով, կողմերը համաձայնեցրել են ամենաբարդ հարցերից մեկը՝ Պաղեստինի նոր վարչապետի հարցը: Հաղորդվում է, որ ներկայիս վարչապետ Սալամ Ֆայադին չի հաջողվի մնալ պաշտոնում: Դա անուղղակիորեն հաստատել է Ազամ ալ Ահմադը, ասելով, որ նման հարցերը պետք է լուծվեն ընդհանուր համաձայնությամբ:

«Համասը» կտրականապես դեմ է Պաղեստինի ներկայիս վարչապետի թեկնածությանը, մինչդեռ «Ֆաթհ»-ի գործկոմը կողմ է դրան: «Համասի» իսլամիստները Ֆայադին համարում են «Ֆաթհ»-ի պաշտոնյա եւ հայտարարում են, որ նա չի կարող գլխավորել տեխնոկրատների կառավարություն:

Ինքը՝ Ֆայադը չի ուզում խոչընդոտ դառնալ համաձայնագրի կնքման ճանապարհին: «Ես չեմ ուզում, որ իմ պատճառով ձախողվի ազգային միասնության կառավարության ստեղծումը», հայտարարել է նա:

Մոսկվա

Պակիստանում ձերբակալվել են բեն Լադենին մատնած 5 իրազեկիչները

Պակիստանի հատուկ ծառայությունները ձերբակալել են ԿՀՎ 5 իրազեկիչների, որոնք օգնել էին հայտնաբերել «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի գտնվելու վայրը: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը:

Ձերբակալվածների մեջ է պակիստանյան բանակի մի մայոր, որը ԱՄՆ-ին հայտնել էր Աբբոթաբադ քաղաքում բեն Լադենի առանձնատան տարածք մուտք գործող ավտոմեքենաների համարները: Թե կոնկրետ երբ են ձերբակալվել ԿՀՎ իրազեկիչները եւ ինչում են մեղադրվում, չի հաղորդվում: ԿՀՎ-ում մի անանուն աղբյուր նշել է, որ գերատեսչության ղեկավար Լեոն Պանետտան այս հարցը արծարծել էր հունիսի սկզբներին Իսլամաբադ կատարած այցելության ժամանակ:

Բեն Լադենը սպանվեց մայիսի լույս 2-ի գիշերը իր պակիստանյան առանձնատանը, ԱՄՆ հատուկ ջոկատների գործողության ընթացքում: Պակիստանի իշխանությունները տեղյակ չէին տվյալ գործողությանը եւ հավատի տվյալներ չունեին բեն Լադենի գտնվելու վայրի մասին: Մասնավորապես նշվում էր, որ ԱՄՆ-ը գործողությունը գաղտնի է պահել, վախենալով, որ դրա մասին կպատմեն բեն Լադենի շրջապատին, եւ նա կհասցնի թաքնվել:

«Ալ Ղաիդայի» առաջնորդը Աբբոթաբադում բնակվել է մի քանի տարի: Նրա սպանությունից հետո ԱՄՆ-ի հատուկ ծառայությունները Պակիստանից խնդրեցին այդ երկրի հետախուզության մի քանի աշխատակիցների գործերը, որոնք, ենթադրաբար, կարող էին օժանդակած լինել «թիվ 1 ահաբեկչի» թաքնվելուն: Պակիստանը իր հերթին ժխտել էր, թե բեն Լադենին թաքցրել են հատուկ ծառայությունները, սակայն սկսել էր քննել այն հանգամանքները, որոնց պայմաններում ահաբեկիչը կարողացել էր այդքան երկար ժամանակ մնալ երկրում:

Բեն Լադենի սպանությունը հանգեցրեց Պակիստանի եւ ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների համագործակցության սահմանափակմանը: Իսլամաբադը ԿՀՎ-ին չթույլատրեց ներկա գտնվել բեն Լադենի ընտանիքի անդամների հարցաքննությանը: Ավելի ուշ ԿՀՎ-ի փոխտնօրեն Մայլ Մորելը Պակիստանի հետ համագործակցությանը «երեք» գնահատական տվեց 10-բալանոց սանդղակով: Գերատեսչության ղեկավար Պանետտան Իսլամաբադի հանդիպման ժամանակ ուղղակի հայտարարեց, որ Պակիստանի հատուկ ծառայությունները համագործակցում են գրոհայինների հետ:

ՍՏՈՒԳԱՏԵՍ

Մեկնարկեց Առնո Բաբաջանյանի անվան դաշնակահարների մրցույթ-փառատոնը

Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական իոլեջը իր 44-ամյա պատմության ընթացքում երաժշտական միջին մասնագիտական կրթություն է տվել 4000-ից ավելի պատանիների: Տարվա սկզբից իոլեջը սկսել է 20-րդ դարի հայ կոմպոզիտորական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Առնո Բաբաջանյանի ծննդյան 90-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարք: Քոլեջում հոբելյանական համերգով բացվել է «Բաբաջանյան եւ ընկերներ» սրահը, որը նվիրվում է հայ կոմպոզիտորական հնգյակին: Հունիսի 15-22-ը իոլեջը կրթության եւ գիտության նախարարության հետ Երեւանում առաջին անգամ կազմակերպում է Առնո Բաբաջանյանի անվան պատանի ու երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոն: Ինչպես տեղեկացրեց իոլեջի տնօրեն, պրոֆեսոր **Արմեն Հարությունյանը**, «փառատոնը կնպաստի ոչ միայն մեծ կոմպոզիտորի հիշատակի հավերժացմանը, այլեւ նրա կենսահարուստ երաժշտության միջոցով պատանի սերնդի երաժշտակրթական գործընթացին, նոր տաղանդների բացահայտմանը»:

Մշակույթի նախարարության եւ մի շարք հիմնադրամների, կազմակերպությունների աջակցությամբ մրցույթ-փառատոնն անցկացվում է տարիքային 3 խմբով՝ պատանեկան «Ա» (մինչեւ 10 տարեկան), պատանեկան «Բ» (11-14 տարեկան) եւ երիտասարդական (15-17 տարեկան): Փառատոնին մասնակցելու հայտեր է ներկայացրել Երեւանի, Հայաստանի 7 մարզերի եւ Արցախի, ինչպես նաեւ ՌԴ-ի, Վրաստանի, Ղազախստանի ու Իրանի երաժշտական կրթական հաստատությունների 112 սովորող: Նրանցից շատերն արդեն միջազգային, հանրապետական մրցույթների ու փառատոնների բազմակի դափնեկիրներ են, տեղեկացրեց պրն Հարությունյանը եւ ներկայացրեց միջազգային ժյուրիի անդամներին: Ժյուրիի նախագահ, Առնո Բաբաջանյանի մոտ երաժշտական դասեր անցած վաստակավոր արտիստ, արվեստագիտության դոկտոր, Յա. Վիտոլի անվան լատվիական երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Ռաֆֆի Խաչաջանյանը հուշեր պատմեց Առնո Բաբաջանյանի հետ իր ունեցած հանդիպումներից ու հատուկ նշեց, որ նման փառատոնի անցկացումը հնարավորություն կտա տարբեր երկրներից ժամանած մասնակիցներին ավելի լավ ծանոթանալ Բաբաջանյանի ստեղծագործություններին, քանզի մրցույթի պահանջներից մեկն է՝ պարտադիր կատարել Առնո Բաբաջանյանի որեւէ ստեղծագործություն: Հաղթողներին կտրվեն դիպլոմներ եւ մեծանուն կոմպոզիտորի դիմանկարով ոսկե մեդալներ:

Երեկ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը մեկնարկեց «Առնո Բաբաջանյանի անվան պատանի ու երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոնը», որը նվիրվում է կոմպոզիտորի ծննդյան 90-ամյակին: Ներկաները առիթ ունեցան ունկնդրելու Առնո Բաբաջանյանի «Ռապսոդիան» դոկտոր, պրոֆեսոր Ռաֆֆի Խաչաջանյանի (Լատվիա) եւ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, կոնսերվատորիայի պրոֆեսոր Արմինե Գրիգորյանի համատեղ ելույթը, որով ազդարարվեց փառատոն-մրցույթի բացումը:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հանձնվեց Թորոս Թորամանյանի անվան մրցանակ

ՀՀ ԳԱԱ-ում երեկ գիտնականներին հանձնվեց հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի անվան մրցանակ: Այն առաջին անգամ հանձնվել է 1972թ.: Մրցանակը շնորհվում է 4 տարին մեկ՝ վերջին 4 տարվա ընթացքում հրատարակված գիտական աշխատությունների համար, որոնք վերաբերում են հայկական ճարտարապետության պատմությանը եւ նպաստում հայագիտության զարգացմանը: Անկախության շրջանում եղած դժվարությունների հետ կապված՝ ՀՀ ԳԱԱ մյուս մրցանակների հետ Թորամանյանի անվան մրցանակը դադարեց հանձնվել: Մրցանակը վերջին 20 տարիների ընթացքում չի հանձնվել: Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ երկար ընդհատումից հետո այն նորից կյանքի կոչվեց: «Երեւան», «Սյունիքի 17-18-րդ դդ. ճարտարապետության համալիրները», «Արցախի ճարտարապետության դպրոցը» գրքերի հեղինակ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը եւ պրոֆեսոր Գառնիկ Շախկյանը, որը 250-ից ավելի գիտական հոդվածների եւ 15 գրքի հեղինակ է, ճանաչվեցին ՀՀ ԳԱԱ Թ. Թորամանյանի անվան մրցանակի հաղթող:

Մրցանակակիրներին շնորհավորական խոսքերով ողջունեցին ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամներ, ճարտարապետներ եւ այլք:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Քարշր արվեստին առնչվելուց հետո պետք է դուրս գաս առավել պայծառացած ու մաքրված

(Հարցազրույց գեղանկարիչ Խաչիկ Հարությունյանի հետ)

- Ապրիլի 20-ին տեղի ունեցավ ցուցահանդես, որտեղ ներկայացված էր նաեւ Ձեր գեղանկարչական շարքը. յուրաքանչյուր ցուցադրում իր խորհուրդն ու նշանակությունն ունի, ինչո՞վ էր պայմանավորված այս ցուցադրումը:

- Ցուցահանդեսը կոչվում էր «Դիմանկար՝ տեղում», մասնակցում էին 6 գեղանկարիչ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի մոտեցում ուներ դիմանկար ասվածին: Տարբեր բնավորություններ, տարբեր անհատականություններ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն մտածողությունն ուներ: Նույն բնորդի վեց տարբեր մեկնաբանություններ, եւ երեւի թե հաջողված փորձ էր եւ գեղեցիկ ստացվեց: Ես ավելի հակված եմ գեղանկարի դասական մտածողությանը: Գեղանկարչական խնդիրների լուծում չկար, այլ կար կերպարի մեկնաբանություն, կերպարի բացահայտում: Դիմանկարը մոտեցման յուրահատկություն ունի իր մեջ: Երբ ես Եվրոպայում էի, այնտեղ արհեստավարժ կերպով սոցռեալիստական դիմանկարներ էի անում, որովհետեւ ինձ մոտ սոցռեալիստական դպրոցը շատ լավ նստած է, այդ ոճը գնահատելի էր էնտեղ: Հիմա ինչ որ անհասկանալի բան է կատարվում, ազատություն բառը շատ է շահարկվում արվեստում, ես դա այդպես էլ չեմ կարողանում հասկանալ: Երբ դու վրձինը կամ մատիտը վերցնում ես, անմիջապես գերի ես դառնում ինքդ քեզ, կամ երբ սկսում ես մտածել այդ մասին, արդեն զրկվում ես ազատությունից: Քրիստոսն ասում է՝ երբ դու մտածում ես մեղքի մասին, դա էլ է մեղք, այնպես որ ազատության մասին խոսք լինել չի կարող: Կա արհեստավարժություն եւ մասնագիտական հմտություն, որը ես յուրացրեցի մեր գեղանկարչության երեւելիների՝ Ղուկաս Ջուբարյանի եւ Հովհաննես Զարդարյանի մոտ: Հետագայում Վահան Արծրունյանի հետ մտերմությունը ինձ շատ բան տվեց: Հետեւելով Արծրունյանի աշխատելաոճին՝ շատ բաներ ինձ մոտ փորձում էի շտկել, եւ դա կարծում եմ կայացման եւ ինքնահաստատման լավագույն ուղիներից է: Իսկ դիմանկարում արտահայտումն ու բնավորությունը փոխկապակցված են, ասենք եթե աչքերը կապույտ են, ես կարող եմ ամբողջ աչքի հատվածը կապույտ դնել, եւ դա շեշտում է նրա բնավորության հիմնական գծերը:

- Եղե՞լ են ստեղծագործական դժվար շրջափուլեր, եւ եթե այո, ինչպե՞ս եք հաղթահարել:

- Աշխատել եմ հաղթահարել նման պահերը: Իհարկե լինում են պահեր, երբ կամ դու ես հեռանում ստեղծագործական ներշնչանքից, կամ ստեղծագործական ներշնչանքն է քեզ լքում: Հաճախ շատ դժվար է լինում, բացակայում են նաեւ նախապայմանները, որոնք քեզ մղում են ստեղծագործելու: Ամռանը շատ դժվար է նկարել, որովհետեւ արեւը, բնությունը վերցնում են իրենցը, ես սիրում եմ ձմռանը նկարել, որովհետեւ ձմռան լույսը իր արծաթափայլությամբ անասելի ձգող է եւ գրավիչ, ձմռանը անսահման խաղաղություն կա, սիրում եմ խաղաղության մեջ նկարել, իսկ դժվարություններ լինում են, երբ խանգարված ես կամ ինչ որ բան քո ուզածի պես չի լինում:

- Դուք որպես աշխատելաոճ ընտրում եք անդադար աշխատելը, թե՞ ներշնչանքն անհրաժեշտ է:

- Անընդհատ աշխատելը: Դե, ներշնչանքի իհարկե լինում է, բայց ես կարեւորում եմ աշխատասիրությունը, ամեն օր գրեթե աշխատում եմ: Գիշերները չեմ նկարում, էլեկտրական լույսը խաբուսիկ է , իհարկե գրաֆիկական գործեր կան, որոնք գիշերն էլ եմ նկարում, նաեւ գրում եմ: Ներշնչանքն էլ եթե լինում է՝ ավելի լավ, կարող եմ սիրահարված լինել, չնայած սերը խանգարում է նկարելուն, ես մինչեւ վերջ կա՛մ սիրելի կնոջն եմ նվիրվում, կա՛մ նկարչությանը:

- Կա՞ն թեմաներ, որ Ձեր գեղանկարչության մեջ առանձնահատուկ տեղ ունեն:

- Իհարկե կան՝ կանայք են. կանայք՝ հրեշտակի մարմնացմամբ, կանայք՝ զրուցելիս, քայլելիս, եւ նայուրմորսն է ինձ անչափ հետաքրքրական, պլաստիկան, գիծը, քնքշությունը, անգամ սենտիմենտալությունը նկարչության մեջ, հնարովի աշխարհն ու իրական կյանքն եմ սիրում: Այն ինչը լույսի մեջ է, գույնը մի փիչ դժվար բան է, ներկելը հետաքրքիր է, բայց մատուցելը՝ դժվար, որ կարմիրը դառնա հոգի, սեր, կապույտը դառնա սեր...

- Զբաղվում եք նաեւ գրականությամբ, պոեզիան եւ արձակը ինչ՞ տեղ են զբաղեցնում Ձեր կյանքում:

- Իմ էության հետ կապ ունի, ես այդպիսին եմ: Էն կուսակումները, որոնք չեմ կարողանում արտահայտել վրձնով, դառնում են պոեզիա կամ արձակ: Ինքս ինձ բացահայտելու ճանապարհներ եմ փնտրում, որը կարող է դառնալ բանաստեղծություն, կամ նովել: Ես գրելուց չեմ մտածում, որ բանաստեղծ եմ կամ արձակագիր, բայց նկարիչ լինելու զգացողությունը մի փիչ ավելի խիստ է, որովհետեւ ես նկարիչ եմ:

- Իսկ ի՞նչ դեր ունի երաժշտությունը, եւ եթե փորձեք նկարել որեւէ ջազային երաժշտություն, ի՞նչ գույներով կպատկերեք...

- Իմ գերադասած գույները որպես էդպիսին չկան, ցանկացած գույնով էլ նկարում եմ, իսկ ջազը էմոցիաների հետ կապված բան է, ես ջազը կարող եմ համեմատել էքսպրեսիոնիզմի հետ, իմ ճանապարհի ընթացքում էքսպրեսիոնիզմից եկա ինչ-որ բանի, էքսպրեսիոնիզմը, երբ որ ամեն ինչ շարժման մեջ է, ինձ հանգիստ վիճակի է բերում դասական երաժշտությունը, սակայն ջազ էլ եմ սիրում, մոտ երգն էլ եմ սիրում, ինձ համար երաժշտությունը պարզապես կենսակերպ է...

- Ինչի՞ն եք հավատում եւ ի՞նչն է Ձեզ անհանգստացնում:

- Ամեն ինչին էլ հավատում եմ. չարին, բարուն, վարդին էլ, թռչունին էլ, խաբող կանանց էլ եմ հավատում, աշխատում եմ երբեք ոչ մեկին չասել, որ չեմ հավատում: Նկարչության մեջ դժվար է ասելը, պոեզիայում ավելի հետաքրքիր է, երբեմն պատրանքային պատկեր է ստեղծվում, բայց դա դառնում է պոեզիայի բարձրագույն ձեւ: Խոսքս գեղեցիկ ստին է վերաբերում, սուտ, որը դիմացինին կարող է թեւ տալ ու ոգեւորել: Իհարկե չեմ սիրում դավաճանությունը, որը խաբել չէ, դա հրաժարումն է ինքդ քեզնից, ամենածանր բանն է: Անհանգստացնում է կանխազգացողությունը, դա վատի զգացողությունն է, որ ինձ վախեցնում է: Երբ իրականությունը չի համապատասխանում ճշմարտությանը, այս երկուսի հարաբերությունը ինձ անհանգստացնում է, գիշերները չքնելու առիթ է տալիս, այդ ժամանակ չեմ նկարում: Ձեմ սիրում նկարչության մեջ սյուռեալիզմը, ընդունում են որպես ձեւ, մտածելակերպ, բայց ես այդպիսին չեմ, նկարչությունը չպետք է բացատրի, այլ պետք է պատկերի, գեղանկարչության գործառույթը պատկերավորությունն է: Եվ այդ պատկերը չպետք է սլաքներ ունենա դեպի քո վերը, քո սիրտը, քո աչքը, լույսը, չպիտի խանգարի ադրելուն: Դալիի ցուցահանդեսից հետո երկու ժամ վաս զգացողության մեջ էի, արվեստը չպետք է բացասական ներգործություն ունենա, բարձր արվեստին առնչվելուց հետո պետք է դուրս գաս առավել պայծառացած ու մաքրված: Այնքան սիրուն բաներ կան, որ մեր օրերում խաթարվում են: Սարյանի պատերազմին նվիրված կտավներում արկեր ու ավերվածություններ չեն պատկերված, այլ ծաղիկներ, ծաղիկների ափշեցուցիչ հեղեղ: Այսօրվա ֆիլմերում էլ հակամարդկային գաղափարներն են գերիշխում, որն ի վերջո սերունդ է դաստիարակում, եւ նույն սերնդին դաստիարակելու ճանապարհին, փառք Աստծո, ստեղծվել ու ստեղծվում են հզոր, բարձրաճաշակ գործեր, օրինակ՝ մեծն Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը, որն իր պատկերավորությամբ, քարտությամբ նորերի մոտ բարձր ճաշակ կարող է ձեւավորել արվեստի նկատմամբ...

Հարցազրույցը վարեց՝
ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

Նամակներ երկրի ղեկավարներին եւ մշակույթի նախարարին

Երեկ «Ազգը» մի քանի ինտերնետային բողոք-հաղորդագրություններ ստացավ մշակույթի նախարարության կողմից Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի աշխատանքային պայմանագիրը չերկարացնելու խնդրի առնչությամբ: 190 ընթերցողների ստորագրությամբ փաստաթուղթն ուղղված է երկրի ղեկավարներին, նաեւ՝ մշակույթի նախարարին, իսկ մեկ այլ նամակ՝ Գյումրիի Հովհ. Շիրազի տուն-թանգարանի տնօրեն Արա Պապանյանից եւ մի խումբ մտավորականներից, որոնք խնդրում են վերանայել որոշումը եւ Ազգային գրադարանի տնօրենի հետ կնքել նոր պայմանագիր, հաշվի առնելով նրա տարիների ներդրումը գրադարանային գործում: Նամակագիրները նաեւ խնդրում են հանդիպում ու պարզաբանում՝ «Հայաստանի Հանրապետության հոգեւոր հարստության ու հպարտության այդ կարեւոր կենտրոնի ապագայի վերաբերյալ»:

«Ազգը» հետեւում է զարգացումներին:

Մ. Մ.

Հայտնի դարձան Արամ Խաչատրյանի անվան կոմպոզիտորական մրցույթի հաղթողները

Երեկ Արամ Խաչատրյան համերգասրահում կայացավ Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի գալա համերգն ու մրցանակների տվչության արարողությունը: Մրցույթում առաջին անգամ ներառվել էր «Կոմպոզիտորների մրցույթ» անվանակարգը: Հենց այդ անվանակարգում առաջին մրցանակը կիսեցին Ալեքսանդր Իրադյանը Հայաստանից եւ Տիխոն Խրենիկովը՝ Ռուսաստանից: Ժյուրիի անդամները սահմանել են նաեւ հատուկ մրցանակներ կոմպոզիտորներ Ելենա Կիրալի եւ Ժիրայր Շահրիմանյանի համար:

Մ.Մ.

Տուրն անհաջող էր հայ շախմատիստների համար

Վորոնեժում ընթացող շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարի 3-րդ տուրն անհաջող էր հայ շախմատիստների համար: Հայաստանը ներկայացնող 4 շախմատիստներից երեքը պարտություն կրեցին:

Երկու անընդմեջ հաղթանակներից հետո մրցաշարում առաջին պարտությունը կրեց առաջատարներից մեկը՝ Զավեն Անդրեասյանը: Հայ գրոսմայստերը սպիտակներով զիջեց աղյուսակը գլխավորող շախմատիստների շարքում գտնվող Կոնստանտին Թառլեւին: Տուրն անհաջող էր նաեւ Լիլիթ Գալոյանի եւ Նելլի Աղինյանի համար, որոնք եւս անդրանիկ պարտությունները կրեցին: Լիլիթը սեւերով զիջեց Դմիտրի Կոկարեւին, Նելլին պարտվեց Նիկոլայ Եֆանովին: Միայն Գեւորգ Հարությունյանը հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով Եվգենիա Սուխարեւայի նկատմամբ: Այդ հաղթանակի շնորհիվ Գեւորգը վաստակեց 2,5 միավոր եւ ընդգրկվեց առաջատարների շարքում՝ ցույց տալով լավագույն արդյունքը հայաստանցի շախմատիստների մեջ:

Ռուսաստանցի հայ շախմատիստներից Արթուր Գաբրիելյանն առաջին կես միավորը կորցրեց՝ հաշտություն կնքելով Անատոլի Պոլիվանովի հետ: Էդուարդ Բարսամյանի եւ Գեւորգ Հայրապետյանի մրցավեճում հաղթեց սեւ խաղաքարերով խաղացող Հայրապետյանը:

3 տուրից հետո միայն երկու շախմատիստ՝ Եվգենի Շարոշնիկովն ու Կոնստանտին Թառլեւն են առանց միավորների կորուստի ընթանում: Նրանք 3 միավորով գլխավորում են աղյուսակը: 11 շախմատիստներ 2,5-ական միավորով հետաքրքրվում են առաջատարներին: Նրանց թվում են Գեւորգ Հարությունյանը եւ Արթուր Գաբրիելյանը: 2 միավոր ունեցող շախմատիստների թվում տեղ են զբաղեցրել Զավեն Անդրեասյանը եւ Գեւորգ Հայրապետյանը: Նելլի Աղինյանն ու Լիլիթ Գալոյանը վաստակել են 1,5-ական միավոր:

Քիմ Քարդաշյանն ու Կրիս Խամֆրիսն ամուսնական պայմանագիր են կնքել

Ամերիկյան People ամսագիրը պատրաստ է 1 մլն դոլար վճարել շոու-բիզնեսի հանրահայտ ներկայացուցիչ, գեղեցկատես Քիմ Քարդաշյանի եւ «Նյու Ջերսի նետսի» բասկետբոլիստ Կրիս Խամֆրիսի հարսանյաց հանդիսությունը լուսաբանելու իրավունքի համար: Նրանց հարսանյաց արարողությունը նախատեսված է հուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին, որպեսզի մինչեւ բասկետբոլի նոր մրցաշրջանի մեկնարկն ամուսնական զույգը ճամփորդության մեկնի: 30-ամյա Քիմ Քարդաշյանն ու 26-ամյա Կրիս Խամֆրիսը բոլորովին վերջերս են նշանվել: Նշանադրության արարողության ժամանակ Քիմն իր սիրեցյալից 20 կարատանոց ադամանդե մատանի է նվեր ստացել, որի գինը 300 հազար դոլար է: Նրանք արդեն հաստատել են ամուսնական պայմանագիր կնքել, որով ամուսնալուծության դեպքում պետք է բաժանվի ունեցվածքը: Ըստ պայմանագրի, ամուսնալուծության դեպքում Բեւերլի Հիլզում գտնվող Քիմի առանձնատունը, ինչպես նաեւ նրա մնացած անշարժ գույքը մնալու են Քարդաշյանին: Քիմին է մնալու նաեւ ամուսնական կյանքի ընթացքում նրա վաստակած գումարը:

Անցած տարի տարբեր շոու ծրագրերից եւ գովազդային պայմանագրերից Քարդաշյանը մոտ 10 մլն դոլար է վաստակել: Իսկ նրա աղգա ամուսնու տարեկան եկամուտը կազմում է 3,2 մլն դոլար:



Նոյերն ընտրեց «Բավարիան»

Գերմանական «Շալկե-04» թիմի դարպասապահ Մանուել Նոյերը նոր մրցաշրջանում հանդես կգա երկրի ամենահեղինակավոր ակումբում՝ Մյունխենի «Բավարիայում»: Մարզական կարիերան «Շալկե-04»-ում սկսած 25-ամյա դարպասապահը մինչեւ 2016-ը պայմանագիր է կնքել նոր ակումբի հետ, որը նրա համար 18 մլն եվրո է վճարել «Բավարիային»:

Գերմանիայի ավարտված առաջնությունում Նոյերն իր վստահ խաղով շատերի ուշադրությունը գրավեց: Նա մեծ ներդրում ունեցավ թիմի մրցելույթներում: «Շալկե-04»-ը նվաճեց Գերմանիայի գավաթը ու հասավ մինչեւ չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ:

«Շատ ուրախ եմ «Բավարիա» տեղափոխվելու համար: Ճակատագիրն ինձ հիանալի փորձություն է պատրաստել: Այս թիմում խաղում են հավականի իմ խաղընկերները, այնպես որ անծանոթ կոլեկտիվում չեմ հայտնվել: Չեմ կասկածում, որ շատ շուտ կմտերվեմ կոլեկտիվին», նշել է Նոյերը:

«Բավարիայում» Նոյերը կփոխարինի Հանս Յորգ Բուտին: Անցած մրցաշրջանում «Բավարիան» դարձավ երկրի բրոնզե մրցանակակիր՝ իրավունք ստանալով մասնակցելու չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարին:

Ռուդ Գուլիսը պատշտոնանկ արվեց

Գրոզնու «Թերեքի» ղեկավարությունը պատշտոնանկ է արել թիմի հոլանդացի գլխավոր մարզիչ Ռուդ Գուլիսին: Ինչպես նշել է ակումբի նախագահ, Չեչնիայի առաջնորդ Ռամզան Կադիրովը, Գուլիսին չհաջողվեց իրեն դրսեւորել մարզչական աշխատանքում: Նրա գլխավորությամբ «Թերեքն» անհաջող հանդես եկավ: Հերթական խաղում «Թերեքը» հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջեց «Ամկարին»: Խաղի նախօրեին տեղեկատվություն տարածվեց, որ եթե «Թերեքը» չհաղթի «Ամկարին», ապա Գուլիսը պատշտոնանկ կարվի: Սակայն հետո հայտարարվեց, որ անկախ հանդիպման արդյունքից հանդիպումից հետո հոլանդացի մարզիչն ազատվելու է զբաղեցրած պատշտոնից:

«Թերեքը» 16 թիմերի մրցավեճում զբաղեցնում է 14-րդ տեղը: 13 խաղում թիմը վաստակել է 12 միավոր:

Դոռինգ սկանդալ Մեխիկայի հավաքականում

Ֆուտբոլի Մեխիկայի հավաքականի 5 ֆուտբոլիստներ հեռացվել են ազգային թիմից, քանի որ նրանց դոռինգ ստուգումը դրական արդյունք է տվել: Մեխիկայի հավաքականն ԱՄՆ-ում մասնակցում է «Ոսկե գավաթ» ավանդական մրցաշարին: Հավաքականից հեռացվածների թվում են դարպասապահ Գիլյերմո Օչոան, պաշտպաններ Էդգար Դուենասն ու Ֆրանսիսկո Ռոդրիգեսը, կիսապաշտպաններ Քրիստիան Բերմուդեսն ու Անտոնիո Նելսոնը:

Մեխիկայի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Դեսիո դե Մարիան նշել է, որ իր կարծիքով նշված ֆուտբոլիստների օրգանիզմում արգելված կլենբուտերոլի պարունակությունը կարող է մսի հետեւանք լինել, որ օգտագործել էին նրանք սնվելիս: Չնայած դրան, ֆեդերացիան որոշել է այդ ֆուտբոլիստներին հեռացնել հավաքականից:

Քոլսը լավագույն արդյունքը ցույց տվեց

Օսլոյում կայացած թեթեւ ատլետիկայի «Ադամանդե լիգայի» խաղարկությունում ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտը 200 մետր վազքում ցույց տվեց մրցաշրջանի լավագույն արդյունքը: Նա մրցատարությունը հաղթահարեց 19,86 վրկ.-ում: 2-րդ տեղը 20,43 վրկ արդյունքով գրավեց նորվեգացի Սայդի Նդուրեն:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

Հայ բռնցքամարտիկները մեկնեցին Թուրքիա

Հունիսի 17-ին Անկարայում մեկնարկում է բռնցքամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը, որի պարգեւները կվիճարկեն նաեւ հայ բռնցքամարտիկները: Երեկ Հայաստանի մարզական պատվիրակությունը մեկնեց Թուրքիա: Պատվիրակությունը գլխավորում է բռնցքամարտի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Արտակ Մալումյանը: Հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանը թիմում ընդգրկել է 7 բռնցքամարտիկի: Անկարայում ռինգ դուրս կգան Եվրոպայի նախկին չեմպիոն Հովհաննես Դանիելյանը (49 կգ), Հովհաննես Բաչկովը (56 կգ), Վլադիմիր Սարուխանյանը (60 կգ), Նարեկ Աբգարյանը (52 կգ), Պեկինի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի գործող չեմպիոն Հրաչյա Ջավախյանը (64 կգ), Սամվել Մաթեւոսյանը (69 կգ) եւ Արթուր Խաչատրյանը (75 կգ):

Մեր բռնցքամարտիկները բավականին լրջորեն են նախապատրաստվել Եվրոպայի առաջնությանը՝ անցկացնելով ուսումնամարզական հավաքներ, մասնակցելով տարբեր մրցաշարերի: Թուրքիա մեկնելուց առաջ հավաքականն Արարատի «Այգ» մարզաբազայում ուսումնամարզական համատեղ հավաք է անցկացրել Իրանի բռնցքամարտիկների հետ: Այնպես որ Եվրոպայի առաջնությունում հայ բռնցքամարտիկներից մեդալների ակնկալիքներ կան:

Մովսիսյանի գոլը նպաստեց «Կրասնոդարի» հաջողությանը

Ֆուտբոլի Ռուսաստանի առաջնության 13-րդ տուրում «Կրասնոդարում» հանդես եկող Յուրա Մովսիսյանը «Վոլգայի» հետ խաղում դարձավ գոլի հեղինակ՝ արդեն 3-րդ որոշիչ բացելով հաշիվը: «Կրասնոդարը» հաղթեց 4-2 հաշվով, թեեւ 2-րդ խաղակեսի միջնամասում խաղադաշտում մնացել էր 10 հոգով:

13 խաղից հետո «Կրասնոդարը» 17 միավորով ընթանում է 9-րդ տեղում: Թիմը տոնել է 4 հաղթանակ, 5 խաղ ավարտել է ոչ-ոքի, կրել է 4 պարտություն: Կրասնոդարցիները խփել են 15 գնդակ, սեփական դարպասը բաց են թողել 17 գոլ:

Յուրա Մովսիսյանն առաջնությունում 3-րդ գնդակը խփեց: Վնասվածքի պատճառով նա որոշ հանդիպումների չմասնակցեց, իսկ այժմ ասիճանաբար լավ մարզավիճակ է ձեռք բերում: 9 գնդակով առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը գլխավորում է «Զենիթի» հարձակվող Դանկո Լազովիչը: «Զենիթը» 23 միավորով 2-րդ տեղում է: Իսկ աղյուսակը 25 միավորով գլխավորում է ԲԿՄԱ-ն:

Մեկնարկում է Կարեն Ասրյանի 4-րդ հուշամրցաշարը

Երեկ երեկոյան Ջերմուկում տեղի ունեցավ Կարեն Ասրյանի շախմատի 4-րդ հուշամրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը: Իսկ այսօր ժամը 15-ին Կարեն Ասրյանի անվան շախմատի դպրոցում կսրվի հուշամրցաշարի մեկնարկը: Մասնակցության ցանկություն հայտնած 70 շախմատիստները կսկսեն մրցավեճը հուշամրցաշարի մրցանակների համար:

Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 15 հազար դոլար է, որը կբաշխվի լավագույն արդյունքի հասած 15 շախմատիստների, ինչպես նաեւ կանանց, պատանիների ու վետերանների մեջ բարձր ցուցանիշ ունեցող շախմատիստների միջեւ: Գլխավոր մրցանակը 3 հազար դոլար է: 2-րդ տեղը զբաղեցրած շախմատիստը կստանա 2 հազար դոլար, 3-րդ տեղը՝ 1500: Կանանց մեջ լավագույն արդյունքի հասած մասնակիցը կստանա 800 դոլար: 500 դոլար է նախատեսված պատանիներից լավագույն ցուցանիշն ունեցող շախմատիստի համար, իսկ վետերաններից լավագույնը կպարգեւատրվի 300 դոլարով: Նշենք, որ մրցաշարին մասնակցում են ընդամենը երկու վետերան շախմատիստներ՝ միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը եւ Ռաշիդ Աբրահամյանը:

Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Արման Փաշիկյանը (2643), որին հաջորդում են Մախսիմ Տուրովը (2634), Եվգենի Գլեյզերովը (2600), Սամվել Տեր-Սահակյանը (2592), Արտաշես Մինասյանն (2558) ու Հայաստանի գործող չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը (2553):

Նախորդ տարիների համեմատ մրցաշարը բավական ուժեղ կազմ է հավաքել: Մասնակիցներից 19 միջազգային գրոսմայստերներ են, 11-ը՝ միջազգային վարպետներ: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Մասնակիցները կբնակվեն «Ջերմուկ աշխարհ» առողջարանում:

Կրկին ոչ-ոքի

Պրահայում ընթացող Սերգեյ Մովսիսյանի եւ Դավիթ Նավարայի շախմատի մրցախաղի 2-րդ պարտիան էլ խաղաղ ելք ունեցավ: Այս անգամ մրցակիցները հաշտություն կնքեցին 36-րդ քայլին: Սեւերով խաղում էր Սերգեյ Մովսիսյանը:

Շարապովան հաջողակ է նաեւ գովազդում

Ռուսաստանցի թենիսիստուհի Մարիա Շարապովան իր հաջող կարիերան շարունակում է ոչ միայն կորտում, այլեւ գովազդում: Օրերս ինտերնետային ցանցում հայտնվել են Շարապովայի լուսանկարները «Նայֆ» ֆիրմայի գովազդային հոլովակների համար: Նա նաեւ նկարահանվել է սպորտի այլ «աստղերի»՝ ամերիկացի վազորդուհի Էլիսոն Ֆելիքսի, բրիտանացի Պերի Շեյկս-Դրեյթոնի, ավստրալացի Լաուրա Ինեվերի եւ չինացի թենիսիստուհի Նա Լիի հետ: Այս լուսանկարները կտպագրվեն Seventeen, InStyle եւ Glamour ամսագրերում:

Այսօրվա դրությամբ Մարիա Շարապովան աշխարհի միակ մարզուհին է, որն ընդգրկված է ամենաբարձր վարձատրվող 50 մարզիկների ցանկում, որը հրապարակել է ամերիկյան «Ֆորբս» ամսագիրը: Նա տարեկան 24,2 մլն դոլար եկամուտով այդ ցանկում զբաղեցնում է 29-րդ հորիզոնականը: Նրա եկամտի հիմնական աղբյուրը «Նայֆ» եւ Cole Haan ֆիրմաների հետ կնքած գովազդային պայմանագրերով ստացվող գումարն է: 2010-ի սկզբին Շարապովան 8 տարով երկարաձգեց պայմանագիրը «Նայֆի» հետ, իսկ հագուստի վաճառով զբաղվող Cole Haan ֆիրմայի գովազդից ստացվող թենիսիստուհու եկամուտն աճել է 26 տոկոսով:



Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Ծովարշավ

«Արմենիա»-ն ունի իր փիլիսոփայությունը

3-րդ էջից

Դեռեւս Վալենսիայի ծովախորշում ամենախորից թխկոց ու աղմուկ լսեցինք: Ինչ-որ ցնցումներ զգացինք: Ախտորոշումն արվեց առանց ստեթոսկոպի: Պարզվեց՝ ոչուսակը համածույլ չէ, ամբողջական չէ: Ինչ-որ պիժոնական թեւեր ունի, որոնք լիսեռի վրա հագած են ինչպես ատամնաբաղիկներ: Իհարկե, մոտավոր ու հեռավոր համեմատություն է, բայցեւ շարունակենք «առամնաբանական» նկարագրությունը: Ողջ ոչուսակը կարիեսի մեջ է: Պետք է փոխել: Նման թերությամբ ոչ մի կերպ չի կարելի Ասլանտիկա մտնել: Կանգ առանք «Կիլիկիա»-ի ժամանակներից մեզ ծանոթ Մալագայում, որտեղ մեր բազմաթիվ հայրենակիցներ են աղրում: Ջանգեցինք: Հանդիպեցինք: Պարզվեց, որ այնտեղ ոչ մի նման ոչուսակ չկա: Շարժվեցինք առաջ: Եվս մեկ նավահանգիստ: Նույն պատմությունը: Ստիպված էինք անցնել աֆրիկյան ափ, որտեղից լավ երեւում են Ջիբրալթարի դարպասները: Սեռւտա նավահանգիստ: Մեկ շաբաթից ավելի կորցրեցինք: Հին ոչուսակը փոխարինեցինք նորով՝ համածույլ, առանց պիժոնությունների: Սգբում տրնջում էինք: Հետո հասկացանք, որ չկա չարիք՝ առանց բարիք:

Ասլանտյան օվկիանոսի կենտրոնում ընկանք զզվելի անհողմության մեջ: Որոշեցինք ամբողջ վառելիքը չծախսելու համար գոնե երկու օր առաջանալ շարժիչով: Օ, սարսա՛փ: Շարժիչը չի աշխատում: Մի ողջ հանգույց շարից դուրս է եկել: Ամեն դեպքում տարիքն իրենն անում է: Հայկը քանդեց ամբողջ շարժիչը, Սամվելը չորս օր շարից դուրս եկած կտորի պես մի բան էր սարքում: Հայկը Վահագնի ու Մուշեղի հետ օր ու գիշեր աշխատում էր: Փառք Աստծո, այդ ընթացքում կանգ չէինք առնում: Առագաստների հույսին առաջ էինք շարժվում, ինչպես Կոլումբոսի կարավելլաները, Բոմբարի ռեյսինե «կոշիկը», Հեյերդալի «Ռա-1»-ը եւ «Ռա-2»-ը: Եվ այստեղ էլ բախտներս բերեց: Ստիպված էինք գնել, ավելի ճիշտ՝ ճարել նոր շարժիչ: Լոս Անջելեսում օգնեցին մեր հյուպատոսը, մեր եկեղեցին, մեր բարեգործական միությունը (Դաշնակցություն) եւ իհարկե, ինչպես միշտ, Ռալֆ Յիրիկյանը:

Այսպիսով, օր օրի, կամա թե ակամա, մեր նավը նորացվեց: Նրա վրա հայտնվեցին նոր ալեռներ՝ կամի նոր միջոցների համար, նոր բախտեղմիչներ, նոր ներքնակներ, նոր սպիտակեղեն: Երեսունմետրանոց բարձրությամբ նոր կարմիր-կապույտ-նարնջագույն առագաստ: Դա արդեն շնորհիվ Ալբերտ Բոյաջյանի: Ընթերցողը հիշում է, թե ինչպես Լոս Անջելեսում մեծ առնետը կրծոտեց բոլոր սինթետիկ խողովակները, դրանց վրա տասնյակ անցքեր բացելով: Ամեն անգամ, երբ այդ նողկալի կրծողը խմել էր ուզում, նոր ծակ էր բացում: Եվ նորից ջանացինք չարիքը բարիքի վերածել: Այստեղ էլ օգնության հասավ մեր վաղեմի բարեկամ Վահե Կարապետյանը, որը կազմակերպեց եւ ապահովեց բոլոր, այդ թվում նաեւ չծակված, բայց հին խողովակների փոխարինումը նորերով: Այնպես որ, մենք նույնիսկ շնորհակալ էինք դժբախտ առնետին, որի վերջը տվեց ամենատվորական թակարդը: Նույնիսկ խղճացինք:

Մի խոսքով, նավի հին տերերը, ըստ ամենայնի դատելով՝ խղճացի նրբակիրթ առագաստանավորդները, այսօր իրենց նավը չէին ճանաչի: Մանավանդ ընդհանուր նավատենյակը: Ձախից, լուսանցույցի երկու կողմերում Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշաններն են: Հիշեցնեմ նաեւ, որ կախված են Մետրոպ Մաշտոցի յուղաներկ դիմանկարը, «Կիլիկիա»-ի լուսանկարը՝ բաց առագաստով, Տերունական աղոթքը՝ խաչքարազարդ շրջանակով, երկու ժամացույց, որոնցից մեկը ցույց է տալիս հայրենիքի ժամանակը, մյուսը՝ տեղականը:

Այն օրը, երբ նավը «զգեստավորվեց» դրոշ-առագաստով, առանձնահատուկ հարազատություն ձեռք բերեց: Իսկ Պանամայի ջրանցքի կրկնակի անցումից հետո պարզապես սիրելի դարձավ: Սակայն երբ դարձյալ Պանամայի ջրանցքով վերադարձավ Կարիբյան ծով եւ մտավ բաց, արդեն Հարավսլանտյան օվկիանոս, արդեն սկսեցինք մոռացությամբ տալ նրա ծննդաբանությունը: Իսկ երբ հատեցինք հասարակածը, կատարելով ծովերի ատված Նեպտունի տոնի ավանդական ծեսը, նավն անվերապահորեն դարձավ հարազատ: Ինչ-որ մեկը (Հեմինգուեյը չէ՞ր) ասել է՝ իմ երկիրը Ամերիկան է, բայց հարազատ քաղաքը Փարիզն է: Այդպես մենք էլ, հավանաբար, հասարակածն անցնելուց հետո կարող էինք մոտավորապես նման մի բան ասել. «Իմ երկիրը Հայաստանն է, բայց հարազատ տարածքը «Արմենիա»-ի տախտակամածն է»: Սակայն Հորն հրվանդանից եւ դեռ Մագելանի նեղուցից հետո արդեն նավի եւ անձնակազմի միջեւ ազգակցական կապերին վերաբերող բոլոր հարցերը հանվեցին: Մեր միջեւ հայտնվեց գիտակցված եւ կյանքով փորձություն անցած վստահություն, փոխըմբռնում, փոխադարձ կախվածություն եւ ամենակարեւորը՝ փոխադարձ հարգանք: Եվ նույնիսկ՝ խաղաղություն: Ինչպես Սոքրատն է ասել. «Խաղաղությունը պատերազմի բացակայությունը չէ, այլ առաքինությունը, մտքի վիճակը, հակվածությունը բարուն, վստահությանն ու արդարությանը»: Եվ ահա կյանքի ու կենսագործունեության նման սկզբունքների առկայությամբ մեր եւ նավի մոտ համագոյակցության նոր, սեփական բանաձեւեր են հայտնվում: Մենք չենք ընդունում պարզագույն «Չարիքը չարիք է ծնում» միտքը: Միայն՝ «Չպատժված չարիքը չարիք է ծնում»: Եվ դա իրոք այդպես է: Մեր նավի հետ միասին շատ էլ լավ հասկանում ու գիտակցում ենք դա: Այդ կապակցությամբ եւս մեկ օրինակ բերեմ, որը թեմային չի հարաբերվում: Չէ՞ որ դպրոցական նստարանից սկսած մի գլուխ այն ենք լսում, թե ճշմարտությունը ծնվում է վեճի մեջ: Չէր խանգարի հարց տալ. «Իսկ ո՞ւմ միջեւ»: Այս մասին մտածելիս իսկույն ցանկություն ես ունենում դասական բանաձեւը փոխարինել քո սեփականով. «Միայն ու միայն բարեկամների վեճի մեջ է ծնվում ճշմարտությունը»: Այդ իսկ պատճառով էլ ոչ միայն անմիտ ու ծիծաղելի, այլեւ վիրավորական է, երբ առաջարկում են Հայոց ցեղասպանությունը վիճարկման առարկա դարձնել Հայաստանի եւ Թուրքիայի պատմագետների միջեւ:

Սակայն վերադառնանք «Արմենիա»-ին: Պետք է թեման շարունակել՝ ավելի մոտենալով աշխարհաշուրջի վերջնագծին: Կուսակվում են, այսպես ասած, վիճակագրական տվյալներ, որոնք ինքնին նույնիսկ շատ հետաքրքրական են: Իսկ առայժմ այն մասին, թե որտեղ է լողում հիմա մեր առագաստանավը: Արդեն պատմել եմ, թե ինչպես նավախելի հետեւում թողեցինք մի ահռելի մայրցամաք՝ Ավստրալիան: Եվ որ մեր մոլորակի ամենատարաշխարհիկ վայրն ենք հասնում, որը այդպիսին է հենց «Արմենիա»-ի համար: Մի երկու-երեք շաբաթվա ընթացքում մեր նավակողերին, ես կասեի՝ Մաշտոցի այբբենին են բախվել տարբեր ծովերի ջրեր, որոնցից են, օրինակ, Թասմանի, Կորալյան, Արաֆուրյան, Բանդա ծովերը: «Արմենիա»-ն մերթ աջ, մերթ ձախ նավակողով շրջվել է դեպի ավելի քան երեսուն մեծ կղզիներ: Դրանց մեջ են Նոր Գվինեան, Թիմորը, Ճավան, Բալին: Պատահել է, երբ մեր փոթորկային օրվա ընթացքում կողերը ոլորվել են մերթ խաղաղ, մերթ հնդկական օվկիանոսների ջրերը: Եվ ամենուր «Արմենիա»-ն իրեն զգացել է նորմալ, հանգիստ, վստահ, հուսալի: Ի դեպ, հուսալիության եւ հույսի մասին ընդհանրապես: Նավային գրականում մեզ հետ ճամփորդում է մի իմաստուն հույն: Նա պարզապես փիլիսոփա չէ: Նաեւ ստոիկյան է: Նրա անունը էպիկտետ է: Այդ նա է կազմել ստոիկների բանաձեւը՝ «Եղիր տոկուն եւ ժուժկալ»: Եվ ահա այդ իմաստուն էպիկտետը հաճախ էր օգտագործում նավը՝ պատկերավորության համար: «Նավը սովորում են կառավարել, որպեսզի չսուզվեն: Այդպես էլ պետք է սովորել կառավարել երկիրը եւ կյանքը»: Ի դեպ, էպիկտետի ուսուցիչը՝ համաշխարհային գրականության առաջին ողբերգակ Էսքիլեսը հաճախ է իր հերոսների շուրթերով ասել. «Ես չեմ վախենում փոթորիկներից, քանզի կարողանում եմ կառավարել իմ նավը: Իսկ ինքը՝ էպիկտետը, խոսելով հույսի մասին, ընդգծել է. «Ինչպես որ չի կարելի նավում ունենալ միայն մեկ խարիսխ, այնպես էլ կյանքում չպետք է հենվեն միայն մեկ հույսի վրա»: Մեր նավը երկու խարիսխ ունի: Առավել հուսալիության համար:

Իսկ առայժմ «Արմենիա»-ն, որն, ինչպես տեսնում ենք, իր փիլիսոփայությունն ունի, անհամբերությամբ սպասում է գլխավոր տնին՝ երկրորդ անգամ հասել հասարակածը: Եվ հարավային կիսագնդից արդեն անցնել հարավ հյուսիսային կիսագունդ, որտեղ գտնվում է ինքը՝ Հայաստանը:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Հնդկական օվկիանոս

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երեւանի էլեկտրաշարժիչների գործարան» ԲԲԸ-ն տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2011 թ. հունիսի 30-ին, ժամը 11-ին ընկերության վարչական շենքի դահլիճում: Հասցեն՝ ք. Երեւան, Սեւանի փ. 86, հեռ.՝ 44-22-44:

Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ կազմելու ամսաթիվը սահմանված է 2011 թ. հունիսի 1-ը:

Օրակարգ՝
1. Հաշվիչ հանձնաժողովի ընտրություն
2. 2010 թ. հաշվապահական հաշվեկշռի եւ ֆինանսական հաշվետվության հաստատում
3. բաժնետիրական ընկերության խորհրդի կազմի ընտրություններ
4. Բաժնետիրական ընկերության վերստուգիչ հանձնաժողովի կազմի ընտրություններ
5. Ընկերության առդիտն իրականացնող կազմակերպության հաստատում

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
»Երեւանի էլեկտրաշարժիչների գործարան» ԲԲԸ համառոտ հաշվեկշիռը առ 01.01.2011 թ.

ԱԿՏԻՎՆԵՐ	գումար (հազ. դրամ)
1. Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	96792
2. Ընթացիկ ակտիվներ այդ թվում	5948
- պարտաճանաչության պաշարներ	4401
- դրամական միջոցներ	1547
Ընդամենը ակտիվներ	102740
ՊԱՍԻՎՆԵՐ	
1. Սեփական կապիտալ	95128
2. Կարճաժամկետ ներդրում	6964
3. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր	648
Ընդամենը պասիվներ	102740

Գլխ. տնօրեն՝ Ռ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գլխ. հաշվապահ՝ Գ. ՈՒԳՈՒՋՅԱՆ

«ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ

ՇԱՆՈՒՑԱԳԻՐ

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԵՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2011 թ. հունիսի 30-ին ժամը 17:00 «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ-ում, ք. Երեւան, Գաստելլոյի 2 փող. 9 շենք հասցեով, տեղի կունենա «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմի և լիազորությունների ժամկետի սահմանում.
2. Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրություն.
3. Ընկերության 2011 թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձի հաստատում.
4. Ընկերության 2010 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունների հաստատում.
5. Ընկերության 2010 թ. տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատում.
6. Ընկերության 2010 թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում.
7. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն.

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը սահմանվել է՝ 2011 թ. հունիսի 15-ը:

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումն սկսվում է 2011 թ. հունիսի 30-ին ժամը 16:30-ին:

Բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին կարող են ծանոթանալ դիմելով, 2011 թ. հունիսի 16-ից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11:00 մինչև 13:30, «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ, ք. Երեւան, Գաստելլոյի 2 փող. 9 շենք հասցեով:

Տրամադրվող տեղեկություններն և նյութերի ցանկը հետևյալն է՝
1. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2010 թ. տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռները:
2. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի 2010 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների եզրակացությունը:
3. «Երեւան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի կողմից տրված «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2010 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների եզրակացությունը:
4. 2011 թ-ի հունիսի 30-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկվող տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների ցուցակ:
5. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2011 թ. հունիսի 6-ին կայացած տնօրենների խորհրդի նիստի արձանագրությունը:

Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին

«ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ տնօրենների խորհուրդ

«ԼՅՈՒՔՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Գաստելլոյի 2 փող. 9 շենք

«30» հունիսի 2011 թ.

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ թիվ 1

1. Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմի և լիազորությունների ժամկետի սահմանում.

կողմ	դեմ	ձեռնպահ

2. Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրություն.

N	Անուն Ազգանուն	Քվեարկություն		
1	Կարապետյան Անուշ	կողմ	դեմ	ձեռնպահ
2	Գասպարյան Մառուսյա	կողմ	դեմ	ձեռնպահ
3	Կրբաշյան Գուրգեն	կողմ	դեմ	ձեռնպահ

3. **Ընկերության 2011 թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձի հաստատում.**

կողմ	դեմ	ձեռնպահ

4. **Ընկերության 2010 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունների հաստատում.**

կողմ	դեմ	ձեռնպահ

5. **Ընկերության 2010 թ. տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատում.**

կողմ	դեմ	ձեռնպահ

6. **Ընկերության 2010 թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում.**

կողմ	դեմ	ձեռնպահ

Ծանուցում. Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակներն են՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:

Յուրաքանչյուր հարցի քվեարկության ժամանակ հարցի դիմաց քվեարկողի կողմից նշվում է միայն մեկ ընտրված տարբերակը, մյուս երկուսը՝ ջնջվում են: Քվեաթերթիկների միջոցով քվեարկման դեպքում հաշվառվում են ձայներն, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկման միայն մեկ տարբերակը:

Նշված պահանջի խախտմամբ տվյալ բաժնետիրոջ քվեարկվող հարցի քվեարկությունը համարվում է անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չի առնվում:

Սույն քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (բաժնետիրոջ ներկայացուցչի) կողմից:

Բաժնետիրոջ Ազգանուն Անուն	
Բաժնետիրոջ բաժնետոմսերի քանակը	
Բաժնետիրոջ ստորագրությունը	✔

Քվեարկության տարբերակներ՝

կողմ	դեմ	ձեռնպահ	նշանակում է՝ քվեարկվող հարցին «կողմ» քվեարկություն
կողմ»	դեմ	ձեռնպահ	նշանակում է՝ քվեարկվող հարցին «դեմ» քվեարկություն
կողմ	դեմ	ձեռնպահ	նշանակում է՝ քվեարկվող հարցին «ձեռնպահ» քվեարկություն

«ԼՅՈՒՔՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Գաստելլոյի 2 փող. 9 շենք «30» հունիսի 2011 թ.

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ թիվ 2

1. **Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն.**

Անուն Ազգանուն	Ծննդյան տ-թիվը	Մասնագիտությունը, որակավորումը	Զբաղեցրած պաշտոնը	Քվեարկություն
1 Գագիկ Բոստանջյան	1953	ինժեներ, տեխնոլոգ	խորհրդի նախագահ	Առանց քվեարկության
2 Գեղամ Բոստանջյան	1957	ինժեներ, տեխնոլոգ	խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	Առանց քվեարկության
3 Մամիկոն Բոստանջյան	1975	տնտեսագետ	խորհրդի անդամ	
4 Գիյա Մեհրաբյան	1964	տեխնոլոգ	խորհրդի անդամ, պահեստապետ	
5 Մանյա Չիբուխչյան	1942	տնտեսագետ, հաշվապահ	խորհրդի անդամ, գլխ. հաշվապահ	

Ծանուցում. Քվեարկության դրված հարցի վերաբերյալ քվեարկությունն անցկացվում է գումարային (կումուլյատիվ) մեթոդով, որի էությունը կայանում է հետևյալում՝

Հարցի քվեարկման ժամանակ յուրաքանչյուր քվեարկողի բաժնետոմսերի քանակը բազմապատկվում է տնօրենների խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամության թեկնածուների քանակով, որը և քվեարկողը կարող է բաշխել իր հայեցողությամբ, դատարկ վանդակներում նշելով համապատասխան ձայների քանակը:

Նշված պահանջի խախտմամբ քվեարկվող հարցի դեպքում լրացված քվեարկությունը համարվում է անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չի առնվում:

Սույն քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (բաժնետիրոջ ներկայացուցչի) կողմից:

Բաժնետիրոջ Ազգանուն Անուն	
Բաժնետիրոջ բաժնետոմսերի քանակը	
Բաժնետիրոջ գումարային ձայների քանակը	
Բաժնետիրոջ ստորագրությունը	✔

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: